


Մ Ի Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Բ

ԱՌԳԱՅԻՆ ԻՆՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՅԻՆԱԿԱՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՅ



ՅԵՐՈՒՍԱԼԷՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԵԱՆՑ

1875

ՅՈՒՑԱԿ ԳՐՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ

ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎ ԲԵԱՆՑ


ԵՒ ԱՐՅՈՂՈՒԹԻՒՆՔ ՆՈՅՆ

ԴԵՒ ՓՐՍ

Ազնէս . Հայերենէ փոխեց 'ի Տանկերէն Յ. Քիւրքենանօֆ . տպուլ 1872 .	4	
Աղօթագիրք Աղապան տնդեաց, աշխարհիկ լեզուաւ .	2	
Անուրջք 'ի Սիօն, ողեսց Մ. Թաթուլ . 1869 .	1	20
Առաքիտ թեան նաման, կամ Մենտոր մամրանց, թարգմանեց Տ. Հ. Թ. Ա .	7	
Աւետարան ասնիք . Ս. Լիկիդեոյ մէջ կարգացուելիք աւետարաններն են .	30	
Աւետարան փոքր . Տպուլ 1867 .	6	
— Նոյնը կրտսերանով . Տպուլ 1867 .	12	
— Նոյնը ճաշու . Տպուլ . 1868 .	30	
Բանաստեղծիւն, աշակերտահետց մէջ . Բ. Տիպ 1874 .	1	
Բացարար թիւն Հրտարանն եւ զղման եւ առաւօտեան երգոց շարհալ . (*)	6	
Գագիկ վերջին արքայ Հայոց Բաղաստեղի, ողբերգութիւն . Տպ . 1672 .	5	
Գործք Առաքելոց, Տպուլ 1867 .	6	
Գործք Ոսկիդիկի Սամուէլ Ռարբի հրէի . Տպուլ 1867 .	3	
Գովասանք . Տպուլ 1867 .	3	
Եղիշէ, սրտանութիւն վարդանանց սրտարագիւն ընտիր գործ նամանաց .	7	
Երեւոյթ կրից . Տպուլ 1851 .	7	
Երկու խօսք, եկեղեցոյ սրտանանց ուղղուած . Տպուլ 1873 .	3	
Երկու խօսքի, աղօթագիրք, գործ նամանաց, Գ. տպաք . 1870 .	7	
Զանազանութիւն հինգ դարաց . Բ. տպ . 1862 .		
Ընդհանրական թուղթք Ներսիս Շնորհաւոյ . Տպուլ . 1871 .	40	
Թանգարան խրատու . Գ. տպ 1870 .	18	
Թափօրի տեսակ տարեկան, Տպուլ 1839 . (*)	18	
— Նոյնը շարթիւրան . Տպուլ 1838 (*)	3	
— Նոյնը Ս. Յակոբայ տանգիւն մէջ կատարուած թափօրներու հանդէպ	2	20
Թուարանութիւն հանուատ, Ս. Պ. Փաշտաղեանցի, Դ տպ . 1869 .	4	
Ժանագիրք խոշորագիր . Տպուլ 1866 .	3	
Ժանագիրք ասնիք . Տպուլ 1870 .	20	
Խնդիր Ս. Տեղեսց եւ նորա սրտանանց քննութիւնը, Տպուլ 1871 . (**)	50	
Խորհրդածութիւն Ս. սրտարագի, գործ նամանաց, Տպուլ 1842 .	6	
Խորհրդատար Ս. սրտարագի, Տպուլ 1873 .	10	
Կարգադրութիւն առողջութեան, Տպուլ 1871 .	10	
Կենսադրութիւն Բասթալայ, Տպուլ 1869 .	5	
Կրտսերի հոգեւոր բանից, գրեց Արգար Խաննց, Տպուլ 1853 .	2	
Կրթարան Աւետարանական բանից, Դաս Ա. Արնն Պետրոս .	6	
" " " Դաս Բ. Սանարայի .	1	20
" " " Դաս Գ. Ողբիք Ատոմոյ .	1	20
Հանդիպուածութիւն երկրտեսան առաքելոց, հանդերձ յաւելուածով .	1	20
Հանաստեղծիւն Քրիստոնէական ուսանն . Տպուլ 1873 .	4	
Հայիկ վերաց . Տպուլ 1852 . (**)	4	
	6	

Ե Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մի տպարանէ (*) եւ քիչ քիչ հարստագիր ԷՄԻԼԷ ԷՄԻԼԷ .
Իւ իրանէ (**) ԲԵՐԴԷԼԻ տպարան ԷՄԻԼԷ .



Մ Ի Օ Ն

ՏԱՍՆԵՐՈՒ ՏԱՐԻ
ԲԻՆ 3.

Ա Մ Ս Ա Գ Ի Բ

ՄԱՐՏ 31
1875.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆՍԱԽԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ կրթութեան խընդիրն ամենակարեւոր խնդիր է մեր ժամանակի մէջ. Ժողովրդեան կրթութեան համար ամեն ժամանակներէն աւելի կ'աշխատին ներկայ ժամանակի մէջ, ոչ միայն յԵւրոպայ, այլ բոլոր գահ աշխարհի մէջ. Երբ Տիւրքի կրթութեան նախարար էր ՚ի Գաղղիա, դառնի համարձակութեամբ առաջարկեց բոլորովն փոխել և նորակերտել նախնական կրթութեան եղանակն ու տարազն և 1870 ու 1871 թուականաց Գաղղիայ եւ Պրուսիայ սոսկալի պատերազմն ակներեւ հաւատաց թէ սրբալի իրաւացի էր յիշեալ տաղանդաւոր նախարարի առաջարկութիւնն :

Ժ

Իտալիայ մէջ Տէրութեան պաշտօնեայք ըստ ամի համազուած են, որ յիշեալ թերակղզեայն մտացի ժողովուրդն առգիտութեան ճիրանէն ազատելու համար միակ ճանապարհն է ժողովուրդն կրթիլ, և այս մասին ամեն տարի նորանոր առաջարկութիւններ և ծրարիրներ կը ներկայանան Տէրութեան խորհրդարանին : Անգլիան, արժգոհ իւր դպրոցաց յամբարայլ յառաջագիծութենէն, նոր օրէնք կը հրատարակէ ժողովրդեան կրթութեան մասին, Փորթուգալիան նոր դրութեամբ ժողովուրդն կրթելու փորձեր կրփորձէ և կը ձգնի նոր գաղափարներու համեմատ շարժիլ : Նաեւ Ռուսաստան

7

իով , իւր քաղաքական և ընկերական մեծամեծ դժուարութեանց մէջ , կրթութեան խնդիրն առանց մտադրութեան չը թողուր : Հողանտիոյ և Ռեւ ճիքայի մէջ , կրթութեան խնդիրն գլորաւած է բարձր ժողովրդեան ուշագրութիւնն : Ամերիկայի Միացեալ Նահանգներն , վերջին քաղաքական պատերազմէն զինի , աւելի լուր զգացած են ընդհանրական կրթութեան կարելւորութիւնն և այնքան մեծամեծ զհողութիւններ կ'անեն կրթութիւնն հանրացնելու համար , որ երբէք լըռուած և տեսնուած չէ (1) : Միով բանիւ Աւստրալիոյ , Կանադայի , Չիլիի և Բրազիլի մէջ անգամ , թէ՛ Լատին և թէ՛ Անգլո-Սաքսոն ցեղերն ձեռնամուխ եղած են կրթութեան գործոյն :

Ամենուրէք միջոցներ կ'որոնեն լոյս տարածել և կրթութիւնն ամենուն մատչելի եւ ամենուն համար պարտաւորիչ անել : Կը ջանան ուսուցման եղանակներն կատարելագործել , կ'աշխատին ուսուցչական դրուորոցներ հաստատել և կանոնաւորել , կը ճգնին դպրոցական շէնքերն բազ-

մոցնել , ուսուցչի վիճակն բարւ որել և բարձրացնել , և գրեթէ ամեն տեղ , ամեն երկիրներու մէջ դրամական զհողութիւններէ չեն խուսափեր կրթութեամբ ժողովրդի վիճակն բարւ որելու համար : Մարդ խոպաւ կար պիտի լինի , որ չը կարենայ տեսնել թէ ազգերու ապագան կախուած է իրենց կրթութեան աստիճանէն :

Այս ամենակարեւոր կէտն ապացուցանելու համար հարկւրուոր փաստեր կարող ենք յառաջ բերել , բայց երեքն միայն բաւական կը համարինք :

Բարոնի պանչելի խօսքն ամեն մարդ զիտէ . “ Knowledge is power ” Գիտութիւնն զորութիւնն է :

Անհամեմատ կերպիւ ճշմարիտ է սոյն խօսքն , գլխաւորապէս անասական առ մամբ : Աշխատանքն բեղմնաւորոյն բնական օրինաց պիտու թիւնն է : Վայրենի կամ անկիրթ մարդն ,

(1) Վիկերդհամ Ամերիկայի ժողովրդային կրթութեան արդեանց մասին պատկաւ կը խօսի . “ Կրթութիւնն աւելի կը բեղմնաւորէ աշխատանքն , եթէ Միացեալ Նահանգաց պետութեան հնձեալ ցորեանն նախկին ժամանակներու մէջ կ'ատուեր և սկիւր շինուեր , լոպանդակ ժողովուրդն պիտի չը բաւեր սոյն գործը կատարելու : Իսկ այսօր զանազան գործիքներու կամ մեքենայաց շնորհիւ փոքրամիւր բանուորներ այն պիտոյն կը հոգան : Մտաւոր աշխատանաց արգիւններն է , որով այսօր մեր տներն , կամարձներն , երկաթուղիներն , նաւերն և շաքենաւերն , ժամացոյցներու , զանաւանդներու , մամուլներու գործարաններն միով բանիւ մեր բարձր քաղաքակրթութիւնն կը փայլէ : Կատարարակութիւն կը բարձրացնէ բանւորն և աշխատաւորն , եթէ նա լուր կրթուած և դաստիարակուած լինի , այն անձանց չափ վարկ և հաւատարմ կը վայելէ , որոնք ձեռքով չեն աշխատիր : Կինկինատա իւր զաւան մշակելով , Սրանկին տըպրասի մէջ գիր շարելով , ամենեւին ստորին չէին որ և ինչ վարկ և պատիւ սննեցող մարդէ :

Կրթութիւնն աշխատանքի չը զորելի և ձանձրանար . այլ կը մղէ զմարդն մեքենաներով կատարել աշխատանաց այն մասն , զոր մարմնաւոր ուժով կատարելու կարօտ էր :

Կ'աւարկեն թէ՛ եթէ ամեն մարդ կրթուի , ո՞վ պիտի աշխատի : Սրա պատասխանն շատ պարզ է . այն ժամանակ ամեն մարդ կ'աշխատի : Միայն թէ աշխատանաց մեծ մասն կը կատարուի մարդկային մարդով 'ի գործ գրուած բնութեան ուժով և ո՞չ թէ մարդկային մարմնոց ջնդերու ուժով : Կրթութիւնն կ'աւաջնորդէ բարեկեցութեան , վասն զի գիտութիւնն զօրութիւնն է և զօրութիւնն կը ծնանի ճօխութիւն և հարստութիւն :

Կրթութիւնն կը բազմապատկէ մեր ուրախութիւնն ու վայելելունքն , մեր երջանկութիւնն : Տեղեւոր մարդն մարմնաւոր հաճոյքներ , վաղանցիկ վայելելունքներ և վայրկինական զուարճութիւններ միայն ունի , որոց հետ խառնուած է տանջանք և տառապանք , իսկ կրթուած և լըստաւոր մարդն կը վայելէ բնութեան , արուեստից , բանաստեղծութեան , երաժշտութեան , իւր նմանեաց հետ ունեցած մտաւոր յարաբերութեան , խորհրդոց և ըրգացմանց հաղորդութեան ամեն զեղեցկութիւններն ամեն հաճոյքներն , որք այնչափ տեսական են , որչափ շատերուն մասն և բաժին եղած են և այնչափ զերծ են տագնապէ և տառապանքէ , որչափ անարատ են և արժանի անմահ հոգեոյն :

իւր բոլոր սուր զգայարանքով և բազմաօգնատ մարմնով, կ'ապրի թշուառութեամբ և կը մեռնի հեծութեամբ: Տնու թեան սյմն կը ծանրանայ նորա վերայ և կը սղոնանէ. վասն զի չքվտէ նս բնութեան զօրութիւնն: Իսկ քաղաքակրթեալ մարդն հազարաւոր տարիներու ուսմամբ և գիւտերով բնութեան գաղտնեաց մէջ թափանցած է. նա բնութիւնն իրեն կը ծառայեցնէ և սակաւ աշխատանքով կը տիրէ նիւթի վերայ, առատօրէն քաղելով ամեն բարիքներ:

Արչափ գիտութիւնն կը յառաջէ, որ սուր կը բաղմանայ ընդ նմին հարստութիւնն: Ատրգային մէջ ամենէն հարուստ ժողովուրդն այն ժողովուրդն պիտի լինի, որ աշխատանաց մէջ ամենէն աւելի գիտութիւն գործ կը գնէ:

Գիտութիւնն ինչպէս որ ամենախորեւոր է հարստութիւնն բաղմայր ներու համար, նոյնպէս կարեւոր է հարստութիւնն գործ գնելու համար: Գրեթէ ամեն տեղ մշակի կամ բանւորի վարձն անբաւական է իւր անհրաժէշտ պէտքերն հոգարու համար և սակայն տգէտ կամ անկիրթ բանւորներն քանի՛ քանի՛ անօգուտ, և նաեւ վնասակար ծախքեր ունին. քանի՛ քանի՛ անգամ իրենց դառն քրտանց վարձքն ունայնութեանց համար յումայէպրս կը վատնեն:

Տգէտ բանւորն, որովհետեւ զուրկ է նախաստետութենէ ու նախահոգութենէ, որովհետեւ իւր միտքն սահմանափակ է ներկային մէջ, ամենեւին չը գիտէ և արժէք չը տար ինսյոյութեան: Սիրահար լինելով բուռն գրգռմանց և զգայական հեշտութեանց, շատ անգամ միայն արբեցութեան մէջ հաճոյք կը գտնէ և սրչափ աւելի կը շահի, այնչափ աւելի կը խմէ: Ե-

թէ կը վատաբերն բանւորի աշխատանաց վարձն բաղմայտասիկ և կեցութիւնն բարւոքել, թող ՚ի ձեռն կրթութեան բանւորի ճաշակն աղնըւացնեն, մասւոր հաճոյց քաղցրութեան վարժեցնեն եւ նախահոգութեան ընտելացնեն:

Որ և իցէ ժողովուրդ շատ շահելու և իւր աշխատանաց բաղմայտասիկ արգասիքն իմաստութեամբ գործ գնելու և վայելելու համար պէտք է որ լուստւորուած ու կրթուած լինի:

Մակոյէյ պատմաբանն կը գիտէ թէ՛ Սկոտլանդին, որ արդ իսկ խեղճ է և տգէտ, թէ՛ դարուն մէջ կը գերազանցէր քան ՂԱնգլիացին ամեն ասպարիզի մէջ և սոյն առաւելութեան պատճառն սոյն էր, որ Էտինբուրգի Խորհրդարանն Սկոտլանդին տուած էր այնպիսի ազգային ուսումն, որ կը պակսէր Անգլիային: Ամերիկայի Միացեալ Նահանգաց տարազաբոճներն կ'ատեն թէ՛ իրենք երկու անգամ վարձ կը հատուցանեն գործաւորաց, բայց դարձեալ կը մրցին Եւրոպայի հետ և սուրա պատճառն ոչ այլ լինչ է, եթէ ոչ իրենց գործաւորաց կրթութիւնն, որոնք թէ՛ արագ կ'աշխատին, թէ՛ լուս և թէ՛ մեծ օգուտ կը քաղեն մեքենաներէն:

Սոյն անտեսագիտական պատճառին հետ միացած է նաև երկրորդ մի, քաղաքագիտական նկատմամբ:

Անդադար կը կրկնեն թէ՛ Հանրաւարութիւնն կը յառաջէ, է՛ որ ուրախութեամբ և է՛ որ խռովութեամբ և տագնադաւ: Հաւասարութիւնն կը յառաջէ ինչպէս միապետութեան մէջ. ո՛չ միայն ՚ի Ձուիցերիա, այլ և ՚ի Ռուսաստան: Աստի կը հետեւի, որ յետ յեղափոխութեան և վերանորոգութեանց, անդադար կը բաղմանայ այն անձանց թիւն, որոնք ընտրութիւն կամ

քուէիւ կը մասնակցին իրենց երկրի կառավարութեանն : Արդէն ընդհանուր ընտրութեան սկզբունքն հաստատուած է քանի մի ազգաց մէջ :

Յրեթէ ամենուրեք անհամբեր բաղմուծիւնն կը բախլէ քուէարիութեան դահլիճներու դուռն , և ահա Անգլիոյ տղնուապետութիւնն իսկ քուէարիութեան դռներն կը բանայ ամբոխին առջեւ :

Սոյն Հանրապետական շարժումն այնպիսի խորին և հանրական պատճառներէ կը յառաջագայի , զոր ոչ մի վեհապետ , ոչ մի կուսակցութի , ոչ մի դաշնակցութի , ոչ մի նիդակակցութի կարող չէ առաջն առնուլ և արգելուլ : Որովհետեւ արգելու ըն անհնարին է , ուրեմն ջանալու է ՚ի բարին գործ դնել , և այս առթիւ հարկ է որ իւրաքանչիւր հանրական քուէարիութեան հետեւանքն լինի հասարակաց բանականութեան յառաջադիմութիւնն և ժողովի այն ժամանակ միայն սկսին ընկերականութեան գործերն անօրինել , երբ ընդունակ և կարող են արդէն իրենց գործերն լու անօրինել :

Ո՛վ որ չը գիտէ իւր ճշմարիտ բարին և օգուան որոշել , նա անընդունակ և անարժան է քուէ տալ և ընտրել նոյն անձինքն , որք ստրալին հասարակաց օգուան ու շահն անօրինել :

Տներ տգէտ ժողովրդին ընտրութեան կամ քուէարիութեան իրաւունք և ահա պիտի տեսնես , որ այսօր ա նիշխանութեան , վաղն բռնապետութեան անդունդն պիտի գլորի : Իսկ ընդհակառակն՝ լուսաւոր և կիրթ ժողովուրդն շուտով ազատ ժողովուրդ կը լինի և իւր ազատութիւնն կը սրահ պանէ , ՚ի բարին գործ դնելով զայն : Ընքնապատան կամ յափշտակող իշխանութիւններն կ'ապրին և կը յարատեւեն միայն հասարակաց թող և տը

հաս բանականութեան շնորհիւ , որ իրենց միակ ապուէնն ու պատրուակն է :

Ճշմարիտ և կաատրեալ ազատութիւնն կրթութեան ազատութիւնն է , երբ թափանցած է մինչեւ շինական կենաց վերջին անկիւնն , մինչեւ շնուկանի վերջին հիւղն ու ապաստանարանն :

Երբ հանրական ընտրութիւնն կամ քուէարիութիւնն ուսման և կրթութեան հետեւանքն է , այն ժամանակ արդար իրաւունք է ազահալ ազրիբ զօրութեան և մեծութեան , իսկ եթէ ընտրական իրաւունքն շաղխուած է յամուռ տգիտութեամբ , աղբիւր է մեծամեծ և անթիւ շարեաց :

Վերջին դիտողութիւն մի եւս պիտի յաւելուիք : Մեծ վրասնք կարէ բուպունսղ ներկայ քաղաքակրթութեանն թող բարեկեցութեան կարօտութիւնն ու ծարաւն հանրանոց ժողովրդեան մէջ , բայց լոյսն ու բարոյականութիւնըն և ս պէտք է ծաւալին ամեն կարգեմարդկանց մէջ , որ առաջնոց արդարութիւն ներշնչեն , և վերջնոց համբուրութիւն , որպէս զի յեղափոխութիւնն ու վերանորոգութիւնն իազալութի կաատրութի և ահա՛ այն ժամանակ յառաջադիմութիւնն անկասկած է և ապահով : Իսկ եթէ ժողովրդեան բարձր գասն կրթուած է , հարուստ և ինքնասէր , իսկ ստորին գասն՝ տգէտ , թշուառ և նախանձոտ , այն ժամանակ արիւնհեղութիւնք եւ խռովութիւնք պիտի չըստրսին երբէք :

Կարճ ասեմք , երեք ստեղծ իւրնդիրներ կը յուզեն և կը խռովեն ներկայ ընկերական հասարակութիւններն , այն է խնդիր ընկերական , խնդիր քաղաքական և խնդիր կրօնական : Արդ՝ ոյն խնդիրներէն և ոչ մին կարող է լուծուիլ յօգուտ քաղաքակրթութե , եթէ հասարակութեան բաղմուտն

մասին, այսինքն ժողովրդեանն տրուած չէ իրական, բարոյական և զօրաւոր կրթութիւնն :

Հանրական ընտրութեան կամքը, ւէտրիութեան իրաւունքն կը տանի դէպ ՚ի անիշխանութիւն և ապա դէպ ՚ի բռնապետութիւն :

Հասարակութեան տարբեր դասերու մէջէն ասելութիւնն ու խռովութիւնն վերջացնելու համար՝ պէտք է որ գործաւորներն եւս կալուածատէր կամ գրամատէր լինելու վիճակին հասնին և այս ո՛չ այլ իւրք, եթէ ո՛չ կրթութեամբ միայն կը լինի :

Արդ՝ ներկայ ժամանակի գործնական խնդիրներուն մէջ ամենէն կարեւորն, ամենէն անհրաժէշտն և ամենէն ստիպողականն հասարակաց կրթութեան խնդիրն է :

Թերեւս ստիւրական խօսքեր համարուին մեր խօսածներն, վասն զի ներկայիս մէջ տգիտութիւնն այլ ևս ջատագովներ չունի : Նախարարք, և պատգամաւորք, գիրք և օրագիրք աւանդն առհասարակ կը յայտարարեն, կ'ազազակեն որ անհրաժէշտ պէտք է ժողովրդեան կրթութեան վերայ մեծ և ամենամեծ ուշադրութիւն դարձընել : Սակայն կայ արդեօք այնչափ պատրաստութիւն, որ ազգերնարիութեամբ դիմադրեն ամեն արգելքներու և յօժարակամ զոհեն ինչ որ կարեւոր է կրթութեան մեծ գործը յառաջ տանելու համար :

Այս թարգմանական ընդհանուր տեսութենէն զինի ՚ի մասնաւորի ահնարկ մի ձգենք մեր ազգային կրթութեան վիճակի վերայ :

Կրթութեան խնդիրն, ցաւակցաբար կ'ասենք, հիմնապէս ուշադրութեան առնուած չէ մեր Ազգին մէջ, և ո՛չ ամենայն ջերմութեամբ յուզուած մեր Ազգային Երեսփոխանա-

կան Ժողովոյն մէջ : Արդարեւ՝ մերթ ընդ մերթ կը խօսուի կրթութեան կարեւորութեան վերայ մեր ազգային պարբերականաց մէջ, բայց առանց իրական և գործնական արգիւնտուրութեան ամեն խօսք կը հնչուի իբրև Զայն Բարբառոյ յանպարտ :

Այս անտարբերութիւնն կատարեալ մահ է մեր ժողովրդեան ներկային և ապագային, ուստի եթէ ագրիկ կը փոփոգիմք Ազգաց մէջ ժողովրդեան կրթութեանն մեծ և ամենու մեծ կարեւորութիւն տալու ենք :

Եթէ երեսփոխան լինէինք, պիտի յամենայն զօրութենէ պնդէինք, որ Երեսփոխանութիւնն իւր խորին միտադրութիւնն կրթութեան խնդրոյն վերայ դարձնէ, որոյ մէջ ամփոփուած է մեր ազգային կեանքն ու գոյութիւնն : Երեսփոխան չեմք, բայց ՚ի բաւր սրտէ կը փոփոքինք, որ ազգային կրթութեան խնդիրն Ազգային Երեսփոխանութեան համար խորին մտածութեան և տնօրէնութեան առարկայ դառնայ :


Եւ ահա՛ գլխաւորապէս այս նպատակու և յուսով կը քաջալերուիմք խօսիլ ժողովրդեան կրթութեան կարեւորութեան վերայ : Սոյն նիւթայն վերայ այնչափ խօսուած և գրուած է յառաջադէմ ազգաց մէջ, որ դժուարութիւն անգամ չունիմք երկար մտածել այս մասին, այլ բաւական է միայն այցոց հասուն խորհուրդներն թարգմանաբար հաղորդել մեր Ազգայնոց : Բայց որովհետեւ խորհուրդներն հաղորդելէն աւելի օգտակար է, մանաւանդ մեր ահաս Ազգին համար, ուրիշ ազգաց կրթական վիճակի պատկերն ներկայացնել եւ ամեն եղանակ ու ձանապարհ մասնանիշ ցոյց տալ, ուստի բարեօք կը համարիմք քանի մի երկիրներ իրենց ժողովրդային կրթու-

Թեան վիճակով պատկերացնել և սոյն պատկերով յոյց տալ՝ թէ ո՞ր երկիր կամ աղբ ո՞ր չափով կարեւորութիւն առած է դաստիարակութեան : Ի՞նչ միջոցներ գործ դրած է և ՚ի գործ կը նէ : Բնչ ալ առաւելութիւններ կամ թերութիւններ կան գործ դրած միջոցներուն կողմէն : Բնչ անխանջ փորձեր փորձած են և կը փորձեն ժողովրդեան մէջ կը թուութիւն ծաւալելու համար : Բնչ զոհորութիւններ արած են և կ'անեն ժողովրդեան ամեն կարգին ըստ հարգելու համար , և այլն և այլն :

Համեմատական գաղափար տալու համար՝ յառաջագէտ աղբերու հետ սխախ բաղդասանք նաև անյառաջագէտներն :

Եւ որովհետեւ վերջին ժամանակներս յաւելտ կը խօսուի մեր Ազգին մէջ Զուլտերկական ժողովրդային կըրթութեան վերայ և մեր ազգակիցներէն ոմանք սխաձ են արդէն իրենց զաւակներն նոյն երկիրն զրկել ուսանելու , ուստի լաւ կը համարվո՞ք Զուլտերկայէն սկսիլ :

(Եարո՞նալիլի :)



Մարդկային սեռի կատարելագործութիւն :

Բնութեան բարոյական օրէնքը :

Պատերազմի կատարածոց նոյն իսկ մէջը՝ չարիք կ'ամբօրն միտք կը լուսաւորեն : Ժողովուրդք կը միանան , և մարդկային սեռին զանգուածը թեպէտ և յամբարայլ , բայց զէպ 'ի աւելի մեծ կատարելութիւն մը միշտ կը դիմէ :

ԳԻՒՐԿՕ

Ո՛հ , զէպ 'ի կատարելութիւնը միշտ յառաջանալու ազնիւ գեղեցիկ ճակատագիրը բնաւ երբեք իր յառաջագիտութեանց վարձանին չը հասնիր :

ԱՆՍԻԼՈՆ

Մեր հոգւոյն խորը կը հանգչի բաւրջագէտներէ հազիւ նկատուած վը

սեմ զգացում մը , որ կը յաւզէ մարդկութիւնը : Մնաց որ ինչ որ ալ ըլլայ իրեն ազխտութիւնը կամ իրեն ըլլալը , մարդս միայն արգարութեամբ և հանձարով կը կամի նոցա իշխելու իրաւունքը ճանաչել , ասկէց կը հետեւի թէ ժողովուրդը կը հնազանդի ամենէն խիստ օրինաց ամենէն այլունդակ սնասպառութեանց , վասն զի զանոնք արգար և իրաւացի կըմբռնէ : Այս պարզ դէտողութեան տակ կիչնան պատմութեան ամենամեծ դէպքերը :

Կըսեմ որ զգացումը վսեմ է . վասն զի կը վկայէ , և այս խակ ստուութեան համար մեր սիրոյն վրայ եղած խնաստակաց զըպարտութեան դէմ կը յայտնէ , կ'ըսեմ որ այնչափ սխալանաց կը կապուինք որչափ որ մեզի իրբեւ ճըջ մարտութիւն կը ներկայացուի : Միտքով դէպ 'ի միջին դարը բարձրացիր , տես ժողովուրդը , ազնուականաց առջեւ , և թագաւորք ազնուականք եւ ժողովուրդք միանգամայն կղերաց առջեւ 'ի դուձս իջած են , ինչո՞ւ համար այս կրկին անարգութիւն , ազնուական յեղին նախասպառութիւնն , ժողովրդեան հաւանութիւնն է , ինչպէս կղերաց սրբութիւնը թագաւորաց և ազնուականաց հաւանութիւնն է , ա՞մենքը արգարութեան և ուղիղ բանին հնազանդիլ կը կարծեն , և ասոր համար է որ կը հնազանդին : Բայց երկողորութեանց մինը , օրինակի համար ժողովուրդը , սխախ հասկնաց խկոյն իրեն մոլորութիւնը անմիջապէս իրեն չըթայք կիչնան եւ զայն գերութեան մէջ բռնող հաւատակներէն կը մերկացնէ . այս արգարութիւնը փնտաել կը փութայ վասն զի կը ճանաչէ թէ հրամայելու իրաւունքը միայն նորա է : Ի հարկ է իրաւունք ունէի զգացումը վսեմ անուանելու , որ կը պահէ մարդկային արժանաւորութիւնը մինչև բը

Նուառութեան գաւառանը և ազատ կ'ընէ մինչեւ ճշմարտութեան նախկին ցլքերը : Այս տիեզերական զգացման մէջ կը ճանաչուի բնութեան օրէնք մը, օրէնք՝ որուն դէմ պիտի չսխալուին մի առ մի բոլոր սնապաշտութիւնք և երկրագնտիս բոլոր բռնաւարտական օրէնագրութիւնք :

Այս օրէնքը ուրիշ երկու օրինաց հետ կը շղթայուի մի և նոյն նպատակին ծառայելու համար, այսպէս : Մարդը ճշմարտութիւնը կը սիրէ աւոր կը փափագի. բնութեան առաջին օրէնքը :

Բայց այս խուզարկութեան մէջ պէտք է իրեն առաջնորդ մը, այս առաջնորդը յինքն կը կրէ :

Մարդս միշտ ամենէն գեղեցիկին կը հակամտի. բնութեան երկրորդ օրէնք :

Վերջապէս այս երկու օրէնքը երրորդի մը արմատն են : Կատարելութեան օրէնքը, որ միմիակ Աստուծոյ հայեացքին տակ ժողովուրդը դէպ 'ի բնութեան օրինաց կատարումն կը տանի, մի և նոյն տատանմամբ և ոչ շարժմամբ, ոմանք յառաջ և ոմանք վերջը :

Վերջին գարուն վերջերը յայտնուեցաւ այս օրէնքը, Թիւրիոն նախադգացում ունեցած էր, իսկ Կոնստանտին իր բանտին խորէն կը փութայ զայն աշխարհի յայտնելմտածմունքը մեծ էր, բայց միայն ընդ ազոտս նշմարեց, կամ լաւ եւս գիտութեանց յառաջագէմ սեղանին վրայ զայն նկարեց, թողով երկրագնդիս վրայ բարոյականին եւ մարդկութեան զարգացման նախախնամական ընելու փառքը յետագայ գարուն :

Այս է օրինաց նպատակը. կամ լաւ եւս ըսել մարդկային սեռին վրայ դրուած մեծ աշխատութիւնը : Ի՞նչ պիտի լինի այս աշխատութեան

վերջը, չը պիտի մ, ամեն բան, որ հընար է նշմարել, դրուած որաշտոն մը, աւելի կամ նուազ երկայն ուղի մը ընթանալու : Եւ բարոյական աշխարհը այս աղջամուղջի մէջ կը թաւալի, բայց միշտ լոյսին մօտենալով :

Անոնք, որ պատերազմեցան, երեւակայեցին այս օրէնքը՝ որ մարդկային իմաստութեան յառաջադիմական աւճումը կը հռչակէր, լի այս մտածութեամբ, կը հարցնեն, ո՞ր բանաստեղծ պիտի հակադրենք Համբոսի, ո՞ր խնաստուն՝ Սոկրատի, ո՞ր քաջամարտիկ՝ Նպամինանդոսի : Իսկ ինչո՞րք հասկնալէն անգամ յառաջ կը վայելեն իրենց յաղթանակը :

Յիրուի, կատարելութիւնը մարդկային բնութիւնը փոխելու կարողութիւնը չէ. Այլ պարզաբար զանգուածոյ շարժմանց և մարդկութեան յառաջադիմութեանց արտայայտութիւնն է : Երկրագունդը ծածկող բոլոր ժողովուրդք իբրեւ մի մարդ նկատելով, ինչո՞ր եղած է թէ այս էակը աշխարհիս սկզբէն 'ի վեր ամբողջ է : Կը հարցնէ իրեն, ի՞նչ էր Սեսոսդրի ժամանակ և ի՞նչ է այսօր, ի՞նչ թերութիւնք անհետ ըրած է և ինչ ճշմարտութիւնք ծագել տուած է, ամենայն ինչ զոր թողած է իր ուղիի վրայ և զոր վեց հազար տարուան ընթացքին մէջ հուաքած է : Մարդկային ճակատագրին փառաւոր տեսարան մը, որուն շրջանակը յաւիտենականութեան մէջ թաւաղող իւրաքանչիւր նոր դարուն կը մեծանայ և կը լուսաւորի :

Երկրագնդիս վրայ ճշմարտութեան յառաջադիմական պատմութեանն աւելի պիտի լինի բարձր ըմբռման պատմութիւն մը, ամենէն մեծ փառք աբիւնագանդ փառք, պիտի բռնէին աւանտէն փոքր տեղ : Բոլոր ժողովուրդք

պիտի ջնջէին որ աշխարհի հետ ամենեւին գաշնագրութիւն չըրին :

Եբրայտաւի ցեղից կապառչաւ. Թեան, գերութեան և մարդկանց ներքին սցման հսկաւակ, անդ քանի միտող պիտի կարեն որ ընդունիլ : Ընդարձակ ասպարէզ մի էր, ուր անթիւ ձեռքեր Տիրոջ օգտին համար կը վատակէին : Բայց քանի որ աղջամուղ մը ժողովուրդը կը ծածկէր, թաղուած ըստ մը գերեզմանաց և տաճարաց մէջէն կարտափայլէր : Պիւթագորոս և Պլատոն փնտռեցին իմաստութիւն և իմաստին քաղաքակրթութիւն գաւազանը Ելլազայ փոխադրեցին : Ալէքէր և Սպարտայ երկու աղտոտ ժողովուրդաց տեսարանը կ'ընծայէին, այս գեռ անձանօթ ճշմարտութեան առաջին փորձն էր, թէ բոլոր մարդիկ աստուածոց առջեւ հաւատար ըլլալով պարտին օրինաց առջեւն ալ հաւատարիլ :

Յունաստան այս սկզբունքը արդէն յաղթական Հռոմին հետ գաշնաւորեց, Սոկրատի վարդապետութեամբ, այն է իր մահուան օրինակը և միակ Աստուծոյ մտածմունքը և բոլոր ճիշմարտութեան ակն : Հռոմ սակաւինչ օգտեցաւ այս ժառանգութենէն, հայրենասիրութեամբ եւ ընտանեաց առաքինութեամբ պատուոյ հասաւ, կեանք մը ամբձութիւնը և որդիական գթութեան կանգնեալ տաճար մը իր տէրութիւնը հաստատեցին եւ զայն յաչա մարդկանց և աստուածոց մեծցուցին, երկիրը իր շղթայից մէջ կը բռնէ և ամենէն զիւրցադնական անձնուրացութեան օրինակը նորա կ'ընծայէ : Բայց, մեռնելով նորա չթողուց որ և է մեծ ճշմարտութիւններէն եւ ոչ մին, որ մարդկային սեռին հայրենական ժառանգութիւնն են :

Աստ չիկայ անխորհուրդ ամբաստանութիւնք, որ պատմութիւնը կը

տհամի հակառակելու, բայց Տակիտոս և Տրտոպիւլիտոս, Հռոմ, հզօր Հռոմ, գիտէ պատերազմել, աշխարհաց տիրել, քաղաքակրթել, բայց ոչ ինչ կ'աւելցնէ Յունաստանի ժառանգութեանց և ոչ ինչ կը նուազեցնէ իրեն վայրագութենէն, բազմաստուածութիւն, կապառչաութիւն, գերութիւն, անձնասպանութեան փառքը, Արկէսի սրիւնը ու շտ իսպելը, մարդկային զոհերը, երկիրը բարբարոսով յայանուած, ժողովուրդք որսի մը պէս նկատուած, և բանակաց իրաւունքը մարդկանց իրաւամբ կանգնած, ժողովրդեանց մուրութիւնք կրօնական հայրենասիրական և քաղաքական անգրթութիւնք, որոնց դէմ, բսան գարէն աւելի աղաղակ մը բողոք մը չը բարձրանար :

Հնութիւնը իրրեւ քողով մը ծածկուած է, զոր Աստուծոյ մեծութիւնը, մարդկային արժանաւորութիւնը եւ բնութեան օրէնքը իր հանձարէն կը թագուցանէր :

Նախնի ընկերութեան յառաջադիմութիւնք այս երեք մտածմանց մէջ կը կեդրոնացնէ : Միութիւն ամուսնութեան մէջ, աշխարհավարական և քաղաքակրթական աղատութիւն, օրինաց առջեւ հաւատարութիւն, այս երկու վերջի սկզբունքները աւելին ձուկ սահմանաց մէջ սեղմուած են, յաղթելոց բնաւ օգնութիւն չի կայ, մարդը չէ որ օրէնքը կը մեծարէ այլ քաղաքացին :

Ահաւասիկ քառասուն դարուն բարոյական գործը : Այն ժամանակ կը կործանի մեծ կայսրութիւնը և իմիասին բոլոր նախնի ընկերութիւնը, այս բեկորաց մէջ աեղ, քաղաքացեոց իրաւունքը կը կորսուի, բայց մարդկանցը կը գտնուի, պարտին հիմնել հրաման մը աւելի ընդարձակ աւելի

արդատաւոր , եւ մանաւանդ աւելի մարդկային , Աստուծոյ միութեան վերայ կրթնած , ուսկից կը ծագի մարդկային սեռին միութիւնը :

Յիսուս Քրիստոսէն էր այս լցար , որ մեղի եկու , պոտաւեց քողը , որ Մովսէսի Աստուածը աշխարհէն կը ծածկէր , սիրովը այլակերտուած , տղայքը հօրը ընծայեց եւ հայրը տղայը , եւ յանկարծ Սօկրատի ամենաբարձր մտածմունքները ժողովուրդոց մէջ կը ջըջաբերէր :

Այս ճշմարտութեան առաջին արգիւնքը երկրագնդիս վրայ հրաշալի գէղար մը եղաւ , այն է գերութեան ընծումը : Բիւրաւոր ժողովուրդք գիտեն այսօր քնն որ չքգիտցան նախնի եւ ոչ իմաստուն մը , գերի մը գնել եւ վաճառել կը նշանակէ մարդու մը արիւնը գնել եւ վաճառել , բռնաբարել , ՚ի մի բան Աստուծոյ օրէնքը եւ մարդկութեան իրաւունքը : Պարզ բնական ճշմարտութիւն , որ իբրեւ պարիսպ կը բարձրանայ նախնի եւ արգի ժամանակաց մէջ տեղ , այսօր գերութիւնը բարբարոս ազգաց բարբարոսութիւն մի է , ատենօք քաղաքակրթեալ ազգաց սովորութիւնն էր , մինչ զի Պղատոն իւր մտային հասարակաստութեան տարերաց մին համարեր էր :

Արիստոտել ինքնին , հանձարի մարդ , խաբուեցաւ , բոլոր ժողովուրդոց զգացումն առաւ իբրեւ բնութեան օրէնք մը : Սովորութենէն իրաւունք հետեւցուց , չխորենալով ծանաչել մարդը գերութեան անարգութեանց մէջ , յայտնեց ստորին ցեղ մը ծառայելու համար ստեղծուած , ինչպէս ձին բեռ կրելու համար , կարծելով թէ ցեղի մը բնաւորութենէն են այս անարգութիւնք , իրօք , ստրկութեան գործն է եւ ոչ բնութեան :

Ժողովուրդեան բարոյական կեանքը ու

Ժ

րեմն ընդարձակուած է մտածմունքով մը , որ Սօկրատի Պղատոնի , եւ Արիստոտելի ժամանակ կը պակսէր , ՚ի զուր Մովսէսի ժամանակ կը փնտռէին :

Յիսուս Քրիստոս զայն հնչեցուց Խոյն բարձունքէն , եւ կորսուեցաւ բարբարոսաց մէջտեղ , եւ պատերազմական սասն եւ ութը դարէն վերջը մենք գտանք դարձեալ Աւետարանին մէջը :

Մեծ յեղափոխութիւն մը եղաւ , այն է գերեաց եւ ատերու աշխարհի մը մէջտեղ նետուած մտածմունք մը : Հռովմ դեռ համայն երկրին կը տիրէր , բոլոր երկրին վրայ կային վաճառատուներ , ուր մարդ գմարդ կը գնէր եւ կը վաճառէր : Յիսուսի Քրիստոսի մըտածմունքը միայն ըմբռնուեցան թէ զոհեր , մնացորդը , ժողովուրդք , արքայք , բարոյագէտք , իմաստակք , մշտաւորական խորհուրդ մը միայն ունեցան , տեսական մը , զոր կրնար վաճառանութեան ենթարկել , կարելի է փոխափայի մը երազ կրնայ լինիլ , եւ նոյնհետայն քաղաքակրթեալ աշխարհի առաքինի կամքը այս երազէն ծագումն առաւ :

Նախնիժաց իրերէն կրնանք հետեւեցնել թէ բարոյականը եւ աշխարհավարականը երեք մեծ յեղափոխութիւնք կրեցին : Միակ Աստուծոյ հաւատալքը Իսրայելացիներով եւ Սօկրատով յայտնուած : Երկրագնդին վերայ քաղաքական ազատութեան առաջին երեւումը Յոյներէն ծագեցաւ : Եւ այս երկու գաղափարաց իրականութիւնը , եւ գերութեան կործանում մը , Յիսուսի Քրիստոսի հօր գործն եղաւ , անդ են մարդկային սեռին բարոյական պատմութեան առաջին մասերը :

Ուրեմն մարդկութիւնը կրնժանայ , գէղ ՚ի ճշմարտութեան թագաւորու

8

Թիւնը կ'արշաւէ : Բնութեան օրէնքը զայն դէպ ՚ի այս նպատակը կ'ուզէ , ուստի երկրագնդիս վերանորոգութիւնը պատկ պիտի լինի , թէ այս ընթացքը առաջին անգամ քիչ մը յամբարայէր , սակայն պէտք էր այսպէս լինել , առաջին ճշմարտութիւնք աւելի դժուարին են յայտնելու , բայց այսօր շարժմանքը կը ճեպէ եւ յառաջագիմութիւնք կը բազմապատկին :

- Միութիւն Ատուծոյ ,
- Միութիւն մարդկային սեռին ,
- Մէր մարդկութեան ,
- Ջնջումն ցեղից .
- Ջնջումն դերութեան :


Քաղաքացւոյ իրաւունքը մարդկային իրաւանցը հպատակեցնել :

Եւ խղճի ազատութիւն :

Աւել ուշով զխտեցէք նախնեաց բուրր անծանօթ ճշմարտութիւնք , եւ այժմեան բոլոր ծանօթ ճշմարտութիւնք : Բոլորն ալ կը ներդաշնակին բնութեան օրինաց , բայց այս յառաջագիմութիւնք զարգացման նախկին տարեքն են միայն : Մեղի կը մնայ գործելու , որչափ որ մեր ակունք պիտի տեսնեն մեզաց յաղթանակը եւ առաքինութեան հարստանքը , որչափ որ ժողովրդական զանգուածք իմաստութեանն եւ հոգւոյ աշխու զարգացումներէն զբուռած պիտի լինին , զմեզ վայրենութենէն կ'անջատէ , որչափ որ մասնաւոր ցեղք գերութեան դատապարտեալ պիտի լինին , (ինչպէս Ամերիգայի մէջ խափշեկք , Մպտավիայ եւ Վալպարիս մէջ Պահիփայիք) այսինքն մարդը իւր նմանը վաճառքի եւ գրաստի անունով պիտի ժառանգէր , որչափ որ երկրագնդիս մեծ մասի մը վրայ , Հրէայք զրկուած պիտի լինին աշխարհավարական եւ քաղաքակրթական իրաւունքներէն , թէ մարդիկ ազնուական եւ սինդքոր ցեղերով պիտի բաժանուին : Թէ աշխա-

տութիւնը անարդուած պիտի լինի եւ աշխատաւորք արհամարհուած : Աւերջապէս որչափ որ մութացիկք բռնաւորք եւ դահիճք պիտի լինին , եւ մարդկային արիւնք պիտի հոսէ երկրիս վերայ , օրէնքը երբէք կատարուած չը պիտի լինի , կատարելութեան գործն է մի առ մի բոլոր նախատանաց եւ անձկութեանց զգեստներէն մերկայընել , որով ընկերութիւնը ծնած ժամանակ զմեզ կըզգեցուցանէ , երկնային ճակատագրային օրէնք որ եւ է հանգըստութիւն չը թողուր մեղի , որ մարդկային սեռին կը խօսի ինչպէս մահը Պոսուէի մէկ տակալի գործին մէջ կ'ըսէ մարդուն : « Յառանջ , յառանջ , եւ բոլոր քաղաքակրթեալ ժողովուրդք իրեն կը պատասխանեն հայելով երկինքը թէ արդէն մենք սրընթաց կ'արշաւենք » :

Էմմե-Մարտէն Թարգ .
 1875. Մարտ 25. Մարտի 6. Թու
գարէան , Ուրբա-որ :




ԵՐԴՈՂ ԹՌԶՈՒՆՆԵՐ

Մէկ գաւառի մը մէջ գեղեցիկ գիւղ կար , որուն չորս կողմը պրուզատու ծառերու պրահներ կը դրուեսնէին , գարունը այս ծառերը կը ծաղկէին . եւ զուարճալի բոյր կը սփռէին իւր ճիւղերուն վրայ . ինչպէս շրջակայ ցանկերուն վրայ . փոքրիկ թռչնոց եւ բամ մը կը բուռնէին , որ իրենց քաղաք դարձանքը կը հնչեցնէին . աշունը այս ծառերը խնձորով , տանձով եւ դամիտով կը բեռնաւորուէին : Բայց ահաւասիկ շատ մը չար աղաքներ սկսան թռչնոց բոյները աւրել :

այն օրէն ՚ի վեր այս հիւրատեաց գաւառը տակաւ առ տակաւ թողուցին . ալ գարնան գեղեցիկ առաւօտները իրենց երգոց ձայները չը լսուեցան . որդոտէրները ըւիկ և արուբ մնացին . տունկերուն վնասակար թրթուռները զոր ատեն մը թռչունները կը ջնջէին , սոսկալի եղանակաւ սկսան բազմապատիւ ծաղիկները եւ տերեւները խանձելին . այնպէս որ ծառերը իրենց տերեւներէն մերկ մնացին , ինչպէս ձրմեռուան մէջ տեղ . և չար տղաքները որ յառաջագոյն քաղցրահամ պտուղները կը վայելէին առատութեամբ , ա՛նոց ամիլը չը տեսան :

Մեր ամենամեծ բարութեան համար Ատուած բնութիւնը կը կարգադրէ , կանոնը խանգարելը ինքը զինքը պատժել ուղիւ կը նշանակէ :



ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ

Մէկ թագաւոր գանձապետ մը ունէր , որն որ հովուական վիճակէն իր տաղանդով և յատկութեամբ մինչեւ բարձր պաշտօնի հասեր էր . թըշնամիները այս բարձր յաջողութեան վրայ նախանձած՝ զանի ամբաստանեցին իշխանին քով . թէ աէրութեան գանձերը իրեն շահուն կը ծառայեցը ներ . աւելցուցին՝ թէ մասնաւոր քաբայրի մը մէջ մէկ երկաթէ դռով ամբայած կը պահպանէր :

Թագաւորը ուղեց ստուգել գործը . այցելութիւն ըրաւ գանձապետին , և ցուցնել տուաւ բոլոր յարկերը . և նշմարեց երկաթէ դռն մը , հրամա

յեց որ բանան , այս տեղ մտած ժաւանակ ինչ եղաւ իր զարմանքը , մի միայն չորս որմերը նշմարեց , և բոլոր կահկարասիք էին , գեղջկական սեղան մը և յարդէ աթոռ մը , սեղանին վրայ կը գտնուէին հովուական սրինգ , ցուպ , եւ մէկ մախալ , պտուտ հանը կանանչազարդ մարգագետիններու և անտառախիտ լեւներու վրայ կը նայէր :

Իմ տղայութեանս ատեն , ըսաւ գանձապետը , ես կը պահպանէի իմ ոչխարներս , դու սլ իմ թագաւորս , զիս ձեր պաշտօր հրաւիրեցիք , իմ այս աստիճան հասնելէն ՚ի վեր օրը մէկ ժամ իմ նախին վիճակիս քաղցր զւարճութիւնները ՚ի յուշ կածէի , և ես իմ սրինգովս կը կրկնէի այն երգերը , զոր ատեն մը ՚ի փառաբանութիւն Ատուծոյ կ'երգէի : Ա՛հ , Տէր Աբբայ , թող տուր որ վերագանամ իմ հայրենեաց դաշտերը , որ պալատի ամեն պերճութեանց մէջէն աւելի գերերջանիկ կեանք մը ունէի : Թագաւորը շատ բարկացած վատ պալատականներուն դէմ , որ կը զբոսորդէին այս բարեբարոյ մարդը , գրկեց պալատելով , որ զինքը բնաւ չը թողու : Ոչ ոսկին , ոչ մեծութիւնը մարդս երջանիկ կ'ընէ :

Ճշմարտ երջանկութիւնը առաքելնի սրտի մէջ կը գտնուի :

1875 Մարտ 25 Թարգ . ՚ի Գաղղեարէնի Ուխտաւոր Նիկողոս Յ . Թոգարէանի Երեսօտիէս :





ԱՐՁԱՆ ՅՍԻԵՐԺԱԿԱՆ ՍԻՐՈՅ Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

Մկրելի Եղբոր իմոյ ճապի Մահտեսի Յովհաննու. Մաշդարացոյ Եղիայեան
որ հանգեաւ. Դ Տէր, Դ հասակի 55 ամաց, Դ Կ. Պոլիս Մարտ 3.

Չի՞ք յաշխարհէ արարած
Միշտ մնայուն անկասկած .
Փոփոխական են համայնք
Դառնալ Դ հող դատապարտք =
Մահկանացու եւ մեք մարդ
Գիտեմք թէպէտ չեմք անմահ,
Այլ սիրելոյ կանուխ մահ
Առթէ մեզ վիշտ սուգ եւ ցաւ .
Ընդ քոյժ մահուն քո վաղճաս ,
Ո՛վ իմ եղբայր հարազատ ,
Մերտ իմ Դ նետ սուր ցաւոյ
Առ բնկալաւ անքոյժ խոյ :
Կաթուածահար անկեալ քոյ
Եւ զիս արկեր շանթահար .
Այլ ոչ մեռայ զի ընդ քեզ
Կենակցէի մշտապէս :
Լքեր ըզմեզ, եղբայր իմ,
Եղբայր կենաց սրժանի .
Թողեր այրի զամուսին՝
Թողեր զորդիս հայրազերի :
Քո գերդաստան նորաչն
Գեր դասատուն էր արդէն,
Ուր մարդկուժեան հէգ անդամք
Զարգանային քաջ կրթեալք :

Սուրբ Յակովբեանց պաշտօնեայդ

Պետ կալուածոց 'ի Քիւղանդ

Իբրու ընդ ամն երեսուն

Հսկեցեր ժիր եւ արթուն :

Արդ զամենայն դու լքեր

Ըստ ցանկութեան հոգւոց քում

Եւ առ Յիսուս դիմեցեր

Յաշխարհ կենաց անարտում :

Չարմանալի սէր քո յիս

Քոցակիզէ արդ զաղիս :

Ձիք մխիթար իմ սրտիս

Որ վշտալից կայ զարդիս :

Չո՞ւր բարեկամք իմ ճգնին

Հարք , հոգեսուն եղբարք իմ ,

Մատուցանել մխիթար

Թշուառ սրտիս վշտահար :

Չի ապառում սրտիս սուգ

Տայ ինձ զգալ յայնց տաղտուկ

Ինձ քաղցրանայ ողորմուկ

Հեղբւլ միշտ դառն արատուք :

Ի զուր սակայն ողբամ ես

Ըզմահ քո իմն ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հրաւեր առեալ 'ի բարձուստ

Հարեր յաթուր զաշխարհ սուտ :

Թողեր բաժին ամուսնոցդ

Եւ որդեկաց սերանունդ

Եւ ինձ եղբորդ եւ այլոց

Ըզմահդ ողբալ սաստկակոծ :

Հանգչի մարմինդ 'ի Տապան

Հանգուսցէ Տէր ընդ արդարս

Չոգիդ յերկնից 'ի խորան

Յաւերժական անդ 'ի փառս :

Մխիթարիչ Սուրբ Հոգին

Հասցէ եւ մեզ յօգնութիւն

Չանմխիթարն առ 'ի մէնջ

Բառնալ զսուգ թախծութիւն :

Զապարիս Վ. Եղեայեան

Միաբան Ս. Երոստաղէֆի :

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԷԹԼԷՆՆԵՐ

ԱՁԴԱՅՆՈՑ ՎԵՐԱՅ

1623 Թուին . Պարոն Տէր Գրիգոր Երուսաղէմի Հայոց պատրիարքի օրովը , Յոյնք տիրապետութեան տենչանօք խնդիր կը յարուցանեն թէ , քանի որ Հայք Բեթլէհէմի մէջ ժողովուրդ չունին , պէտք է որ ձեռնթափ լինին Մընընդեան սուրբ Տեղիքներէն , և նոյն իսկ Բեթլէհէմի մեր վանուց մէջ Եկեղեցւոյ շինութեան արգելք ըլլալ կ'ուզեն :

Իրաց այս պարագաները կ'ընտրուեն զՊարոն Տէր Պատրիարքն , որ Երուսաղէմի սուրբ Յակոբայ վանուց քրձաղպեաց միաբաներէն Մուշեցի Յակոբը 'ի Բեթլէհէմ տանելով կ'ամուսնաց ւնէ Լատին օրիորդի մի հետ , հոն նոյաբնակութեան տեղի հաստատելով անոնց ամէն պէտքերը կը հոգայ : Եւ անոնցմէ կը սերեն Բեթլէհէմի Հայ ժողովուրդը , որոց թիւը այսօր հարիւրէն աւելի է :

Յիշեալ Յակոբն կը ծնանի զՆերսէսը Ներսէս կը ծնանի զՅակոբն , Միտրին , Մովսէսն և Աբրահամը : Աբրահամն չամուսնացած Վատվուքի ըսուած գիւղի մէջ կըմբռնի վիրաւորուելով երկու գիւղի իրարու հետ պատերազմած ժամանակ :

Ներսիսի անդրանիկ որդի Յակոբն կը ծնանի զԳէորդը , Յովսէփը , Գաւիթը , Գրիգորը և Եղիան :

Ներսիսի երկրորդ որդի Միտրին կը ծնանի զԱբրահամը :

Ներսիսի երրորդ որդի Գրիգորն կը ծնանի զԽաչիկը :

Ներսիսի չորրորդ որդի Մովսէսն կը ծնանի զԵղեայն և զՅովհաննէսը :

Յակոբի անդրանիկ որդի Գէորդն կը ծնանի զՅակոբ , Սողոմոն , Ներսէ-

սին , և Սալէհ (արգար) և երկու դուստրը Հիլուէ (անուշ) և Մարիամը :

Յակոբի երկրորդ որդի Յովսէփն կը ծնանի , զՄարկոս :

Յակոբի երրորդ որդի Գաւիթն կը ծնանի զՅովհաննէսը , Աբրահամը , Եղիայ և հինգ դուստր Սուլթանը , Ազիզէ , Վարսէ , Միլտասը (ծնունդ) , Հիլուէ :

Յակոբի չորրորդ որդի Գրիգոր կը ծնանի զՅովհաննէս եւ մի դուստր Կաթմայ անուամբ :

Յակոբի հինգերորդ որդի Եղիան կը ծնանի զԱբրահամ և զԳէորդ :

Միտրինի որդի Աբրահամն կը ծնանի զՅովսէփ , զՄովսէս , զԳէորդն , զՅակոբն , զԽաչիկ , զՄիգրինն , և երկու աղջիկ Հիլուէ և Վարդէ :

Գրիգորի որդի Խաչիկն կը ծնանի զՅակոբ , Յովհաննէս և երկու դուստր Վարսէ և Ազիզէ :

Մովսէսի որդի Եղիան կը ծնանի ըդ Սէլիմ :

Մովսիսի երկրորդ որդի Յովհաննէսն կը ծնանի զԳէորդ և Մովսէս և երեք դուստր զՎարսէ , Մարիամ ու Հիլուէ :

Գէորդի որդի անդրանիկն Յակոբ կը ծնանի զԳրիգոր և զԱնտոն :

Գէորդի երկրորդ որդի Սողոմոն կը ծնանի զԱւետիսը , Սահակը , եւ երկու դուստր Նէճմէ (Ասող) եւ Սառայ :

Գէորդի երրորդ որդի Ներսէսն կը ծնանի զԱստուածատուր եւ չորս դուստր Նէճմէ , Հիլուէ , Վարսէ և Մարիամ :

Գէորդի չորրորդ որդի սալէհն կը ծնանի զԱստուածատուր , զԳէորդը , զՅակոբ , և մի դուստր զԻլանէ :

Յովսէփի որդի Մարկոսն կը ծնա-

նի զԳէորդ և դուստր մի Հիլուէ :

Գաւթի որդի Յովհաննէսն կը ծընանի զԳէորդ և Յակոբ :

Գաւթի երկրորդ որդի Աբրահամն կը ծնանի դուստր մի Մարիամ :

Գաւթի երրորդ որդին Եղիան տակաւին անզաւակ է :

Գրիգորի որդի Յովհաննէսն կը ծընանի զԱբրահամ, Գէորդ, զՅակոբ, և երկու դուստր :

Եղիայի որդիք Աբրահամ և Յովհաննէսն կը ծնանին զաւակաւնս յԵգիպտոս :

Աբրահամու որդի Միդրին կը ծընանի զԳէորդ :

Աբրահամի երկրորդ որդի Յովսէփն կը ծնանի հինգ դուստրն զԱղղղէ, Սառայ, Հաննէ, Նիճմէ և Հիլուէ :

Աբրահամի երրորդ որդի Մովսէսն կը ծնանի զԱբրահամ, Սալէհ, Սաղլմոն, Մարկոս և չորս դուստր Հիլուէ, Մարիամ, Վարաէ և Սառայ :

Աբրահամի չորրորդ որդի Գրիգորըն կը ծնանի զՀասիկայը, Սէլէմէ, Սողոմոնը և Գրիգորը, և մի դուստր Տարհէ :

Աբրահամի հինգերորդ որդի Յակոբն կը ծնանի զԵղիայն, Սալէհը, Խալիլը, և չորս դուստր՝ Յիդանէն, Նուարան, Վարաէ և Հելլումէ :

Աբրահամի վեցերորդ որդի Խալիլըն կը ծնանի զԱւետիսը, Սալէհը, և մի դուստր Մարիամ անուամբ :

Եղիայի որդի Սէլիմը կը ծնանի զԱստուածատուրը :

Յովհաննէսի որդի Գէորդն կը ծընանի զԱստուածատուրը, Սէլէմէն և զՍէյիտ :

Յակոբի որդի Գրիգորն կը ծնանի զՅակոբ :

Յակոբի երկրորդ որդի Անուոնն անզաւակ է :

Սողոմոնի որդի Աւետիսն կը ծնանի զՅեզամ և Աննայ դուստրն :

Սողոմոնի երկրորդ որդի Սահակն տակաւին անզաւակ է :

Ներսիսի որդի Աստուածատուրն տակաւին անզաւակ է :

Սալէհի որդիներն անզաւակ են և յիշեալ անզաւակներն նոր ամուսնացած են :

Սէլիմի որդի Աստուածատուրն կը ծնանի զՅակոբ :

Յովհաննէսի որդի Աստուածատուրըն կը ծնանի զՄարիամ :

Սոցոս կենդանիներուն թիւը 103ի կը հասնի :

Բայ ՚ի այս ժողովուրդէն 12 Հայրնակիչ ևս ունիմք ՚ի Բեթլէհէմ, որք ժամանակին Քէրակէն գաղտած են :

Սոյն ժողովրդեան տակաւաթիւ լինին, որ մեծ զժուարութիւն յարուցած էր, ամուսնանալ ուղղներու մէջ տեղը, վերջին ժամանակներս հանգուցեալ Յովհաննէս Սրբազան Պատրիարքն, եթէ ոչ աշխարհի առաջին մարգայն խաղառ հետեւելու, գոնէ սակաւին մօտենալով, ճիւղահամարութիւնը երեքի իջեցոյց, որով քիչ մը դիւրութի եղաւ մեր սակաւաթիւ Հայ ժողովրդեան (օտար ազգաց ազդիւնք իրեն հարսնութեան չառնելով), իրենց մեր ձակաները իրեն հարսնութեան առնելով :

Թէև Բեթլէհէմի մէջ անխտիր ամեն Քրիստոսնայ ազգերն իրարու հետ խնամութիւն կ'ընեն, բայց Լատինք և Յոյնք միշտ կը զգուշացունեն իրենց ժողովուրդը, որ օտար ազգաց ազդիկ չի տան :

Նաև ըստ տեղւոյն սովորութեանց հարսնախօսութեան գրամական դաշնիբը Պօլսոյ Թրոսիօմոյի հսկողական է, փոխանակ աղջկան ծնողներէն պահանջելու, իրենք 20 ոսկիէն մինչև 100 ոսկի կը վճարեն աղջկան ծնողաց, մահաւանգ աղջկան մերձակոյ ազգակաւնաց ամենուն ալ ըստ արժանւոյն մէկ մէկ ընծայ կը տրուի տղայի կողմէն, և ասոր բուն պատճառն ալ տղայոց, շատ ծնանիրն և աղջկանց սակաւ լինելն է :

Բեթլէհէմի ժողովրդոց միութիւնն ազգայինէն աւելի թաղային է, մինչև իսկ Յիկեղեցիական խառնութեանց մէջ, ինչպէս որ շատ անգամ պատահած է Հայոց թաղերու մէջ բնակող Յոյներն և Լատիններն Հայոց ժողովրդեան հետ միանալով, Յոյն և Լատին ժողովրդին դէմ զինած են :

Այս օրինակին կը հետեւին Բեթլէհէմի ամեն Քրիստոսեայ ազգերն :

Բեթլէհէմի Քրիստոսեայ ննջեցելոց յուղարկաւորութեան ժամանակը Եկեղեցական հանգիսի հետ կը խառնուի, նաև կանանց հանգէսն, որք նրնջեցելոյն ձիբքիբը եղանակաւոր բարձր ձայնով մը երգելով դադաղի ետեւէն կ'երթան, և մեռնողի շատ մերձակոյ կանայք խոսքս գլխի բաց կ'երթան :

Մեռնողի ամենասիրելի զգեստներն հետն կը թաղեն, միայն թէ Բեթլէհէմն, Երուսաղէմի սահմաններու ուրիշ բաղաբաց սովորութեան չի հետեւիր, նոր թաղուած ննջեցելոյն վերայ վրան յօրինելով երեք օր կը սպասեն և իրենց ծանօթ ազգականն և բարեկամներն երեկոյ և առաւօտ գնալով վրանի տակը սուրջ կը խմեն : Բեթլէհէմի կանայք ութ օր շարունակ ննջեցելոյն գերեզմանի վրայ երթալով, երգեր յօրինելով ողբաձայն կը երգեն դարձեալ մերձականներն գլուխն բաց կ'երթան :

Այս արարողութիւնը քառասուն օէն վերջն եւս կը կատարեն :

Նաև Բեթլէհէմցիները ինչպէս որ Պաղեստինեոյ շատ տեղերը ննջեցելոյն ամենէն ընտիրը և իրեն սիրելի հագուստները իրեն հետ կը թաղեն, այս ասութիւ ուրիշ տեղերը վրան կը յօրինին գերեզմանի վրայ և երեք օր կը սպասեն : Նաև տեղւոյն ժողովուրդն ամեն երեկոյ և առաւօտ գերեզմաննոցը դիմելով վրանի տակը սուրջ կը խմեն : Այս սովորութիւններն առանց բացառութեան են : Որ և է քրիստոսեայք և մահճեստականք անխտիր 'ի դոքս կը դնեն :

Խորէն վարդապետ
Միխայիլ :

Կ Ի Ի Ի Ն

Ալիւրինցի աղբայնոց վերայ խիստ ուրախական տեղեկութիւններ կը ըստանամք : Գովանի վաճառքանօք կ'աչխատին իրենց զաւակոց կրթութեան համար : Թէեւ ունին դպրոց, բայց անյարմարութիւնն եւ անձկութիւնն զգալով, հանգանակութիւն բանալով իրենց մէջ և վեց հարիւր ոսկիէն աւելի դրամ հաւաքելով հիմնարկած են նոր դպրոց կառուցանելու երկսեռ աշակերտեցոց համար :

Շատ աղքատասէր են և կարեկից և կարօտ ընտանիքներուն արագ արագ օգնութեան կը հասնին : Այս տարիքանի մի ամսուան մէջ, բաց 'ի աղքատաց բաժնած ցորենէն, ալիւրէն, միսէն և այլ պիտոյքներէն, 120 ոսկիէն աւելի դրամ եւս բաշխած են, երկրի սովատանջներն մահաւանէ ազատելով :

Կեցցէ այսպիսի ժողովուրդն, որ ուսման մեծ յարգ կը տայ և մարդասիրութեան մէջ արի կը հանդիսանայ :

Ս Ո Ւ Ս Կ Հ Ս Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Սոյն վերնագրով նոր երգարան մի տպագրուած է ՚ի Քաղաք, սատարութեամբ Մարտիրոսիան Ընկեր-ութեան և Բարագրութեամբ Ա. Գայ Գրիգորեանց, որոյ մէջ կը պարունակին բաւականին Ազգային երգեր, որոնք ցարդ տպագրուած չեն երգարանաց մէջ: Սոյն նոր երգարանի ամբողջ ղգարունակու-

թեան մասին դաղափար ունենալու համար՝ անշուշտ կարգալու է բոլոր նոր երգերն, որոնք թէեւ Ռուսաստանի մեր ազգայնոց յատուկ բարբառով գրուած են, բայց ամեն հայու համար հրապարակուին և արժանի են ընթերցանութեան:

Հետեւեալ երգն նոյն երգարանէն առնելով՝ արժան կը համարուիք տպագրել ՚ի յորդոր Ազգայնոց:

Լ ՍԵՑԻՔ, սիլ իմ Հայեր. մի կարծէք նոր լուր եմ ասում,
Իմացէք ձեզ շահաւէտ էս խօսքերս սուր եմ ասում.
Ո՛վ կուզէ թող լուր լըսէ նրան քրտիս դիւր չեմ ասում,
Ո՛վ կամի թող հասկանայ, նրան իմ ջան հիւր եմ ասում,
Արդեօք նրան թիչ անուն տամ, նրան խելքից թիւր եմ ասում:
Լսեցէք սիլ իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Լըսեցէք ու կիմանաք մեր վաղուցիւյ անբքք, Հայեր,
Թէ թիչդէս հաշակված էր անուամբ Հայոց ազգը, Հայեր,
Այլոց պէս Հայն էլ ունէր մեծ տէրութեան փառքք, Հայեր,
Թագաւոր, զօրք, զօրավար, քաջ ու ազնիւ վարքք, Հայեր,
Անհամար գեղ ու քաղաք ունէր մեր աշխարհքք, Հայեր,
Բայց հիմիկ թիչ մընաց մեզ, մեր ցաւերը բիւր եմ ասում:
Լսեցէք սիլ իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Թշնամիք մեր աշխարհքք քանդեցին աւերակ թողին,
Էն մեծ մեծ քաղաքներից Անին մեզ օրինակ թողին,
Մեր թագ, գայտոն խլեցին, Հայաստան անձրագ թողին,
Էն Հայոց բազմութիւնը մաղի նրման բարակ թողին,
Սպանեալ, դուրս քշեալ ցիր ու ցան ոտքի տակ թողին,
Անտէր վարքիցն էր ողջ, չէ թէ էս ձեզ զուր եմ ասում:
Լսեցէք սիլ իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Բայց հիմիկ ամեն աշխարհ թափառական մենք ցրուել ենք,
Ջրիւած Հայրենիքից, նախնեաց վարքից հեռացել ենք,
Մեր հաւատ, մեր Աղբ, լեզուն, էլ չենք պաշտում ուրացել ենք,
Սրտայաւ չենք մէ՛կ մէկու, մոլի վարքով խտտացել ենք,
Թշուառ ենք, մեր լուսն ու վառ, չենք հասկանում կուրացել ենք,
Ի՞նչ ասեմ, որ մինն ասեմ, Հայեր, մեզ թուք մուր եմ ասում:
Լսեցէք սիլ իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Ժ

Թէ ուղինք մեր վիճակը , էսպէս խեղճ , թշվառ չի մնայ ,
 Ոչ մէկ Հայ արդէտ , անբան , բեռնակիր տաւար չի մնայ
 Կը ստուի աղբի շահը , այլոց ձեռք աւար չի մընայ ,
 Միաբան մեր հոգս կաններ , մեր մէջ մարդ չիւար չի մընայ ,
 Կրկին մեզ լոյս կը ծագի , մեր օրը խաւար չի մընայ .
 Թէ առնենք ուսման համը , որ վրկութեան դուռ եմ ասում :
 Լսեցէք ս'վ իմ Հայեր , մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն :

Տեսէք թէ ուրիշ աղբեր ուսումով ի՞նչ կարգի հասան ,
 Վաղ էին խեղճ , վայրենի , հիմիկ աղնիւ վարքի հասան .
 Չունէին կարգ ու կանոն , հիմիկ էնպէս սարքի հասան
 Սաղ աշխարհ իրանց ձեռն է , էն իմաստուն բարքի հասան
 Փաղկեցան , շատ զօրացան , ահա՛ ինչպէս փառքի հասան .
 Եւ ոչ թէ Հայի նրման , ամենից թափուր եմ ասում :
 Լսեցէք , ս'վ իմ Հայեր , մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն :

Ինձ կ'ասեն « Մի գանգատիլր , յոյս ունեցիր Հայի մասին ,
 Հայը միշտ հետեւող է լաւ անուան համբաւի մասին ,
 Մի կարծիր նա չի ցաւում իւր խորտակուած նաւի մասին ,
 Համբերիլր և քո Հայնէլ ճար կանի իւր ցաւի մասին » .
 Ի՞նչ ասեմ , մի՞ թէ կարնամ , էլ խօսք բայցեղ դաւի մասին .
 Սուրէնն եմ , էսպէս խօսքեր օրէնը հարիւր եմ ասում :

Տ . Տ . ՄԿՐՏԻՉ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ


Կիլիկիոյ վիճակի եկաւորներէն կ'ը
 մանամք , թէ Տ . Տ . Մկրտիչ Կաթու
 ղիկոսն մեծ ջանքեր կ'ընէ Կիլիկիոյ վի-
 ճակի թեմականաց բարոյական և ու-
 սումնական յառաջադիմութեան հա-
 մար : Արդէն իւր յորդորանօք և զհո-
 ղութեամբ քանի մը տեղ դպրոցներ
 բացուած և ընկերութիւններ հաստա-
 տուած են : Մարաշի մէջ յատուկ յոր-
 դօրներ կարգալով կանոններ հաստա-
 տած է , որով և վերցուցած է հար-
 սանեաց , ննջեցիւոց թաղման , և այլ

այսպիսի արարողութեանց ժամանակ
 ընտանեաց մէջ կատարուած չափա-
 ղանց ծախքերն , զորս շատ անգամ չը-
 քաւոր ընտանիքներն իսկ ունեւո-
 րաց նմանելու նախանձով կրնեն 'ի
 փնաս իրենց ընտանեկան բարեկեցու-
 թեան :

Յիշեալ Կաթողիկոսն յաճախ այցե-
 լութեան կ'ընէ թեմականաց , եկեղե-
 ցիներն և եկեղեցականաց վիճակն նը-
 կատողութեան կ'աւանու և հայրաբար
 խաղաղութեան , սիրոյ և աշխատու-

Թեան յողորմեր կը կարգայ ժողովըրդեան, այնպէս որ գրեթէ բոլոր թեմականք գոհ են իւր Զանքերէն, բայց ՚ի Սոյ միաբաններէն, որոնք թերեւս Ս. Կաթողիկոսի անաչառ և խտտպահանջ վարմունքէն ստկալով՝ ցարդ չէին կամենար, որ ՚ի Սիս իւր Աթոռոյն վերայ գահակալէ: Արդէն պատմութիւնն ցոյց կը տայ, որ Սոյ կաթողիկոսուհի, գրեթէ մեծաւմասամբ ստիպուած են եղեր թափառական կեանք վորել: Սակայն Մկրտիչ Կաթողիկոսի նկատմամբ՝ նոյն իսկ եկաւորներէն կը ըտել, որ Սոյ միաբանք վերջին ժամանակներս միաբանած են հրաւիրել զինքն իւր աթոռն և վերջ տալ աղգաւէր երկրպառակութեանց: Շատ մը խիթարական է այս հրաւէրն, եթէ մարբը է գաղտնի նպատակներէ: Ս. Կաթողիկոսի տաղնապն ու տառապանքն ոչ Սոյ միաբանից գիմադրութիւնն եղած է ցարդ և ոչ թեմականոց ոմանց տհաճութիւնն, այլ իւր մենաւոր, անաջակից եւ անքաջաւոր մնալն ՚ի պակասութենէ խոհուն եւ բանիբուն եկեղեցական պաշտօնէից: Մկրտիչ Ս. կաթողիկոսն մարդոց կարօտութիւն ունի և ոչ ուրիշ բանի: Այս կարօտութեան պատճառաւ, կը պատմուի թէ, շատ անգամ ստիպուած է ինքնին դիւղերն անգամ երթալ, զանազան գործեր տնօրինելու համար: Եւ ո՛վ չը գիտէ, որ Կիլիկիոյ վիճակն արդարեւ մարդոց կարօտութիւն ունի, ուր պատշականութիւն և բողբականութիւն իրարու հետ կը մըցին նորանոր վարդապետութեամբ հայութիւնն խարբալել: Խղձալի Կաթողիկոսն ինչպէս պիտի կարողանայ մէն միայնակ իւր հօտի ամեն պիտոյքն հոգալ. մի կողմէն դպրոցաց համար աշխատիլ, մի կողմէն վարչական պետքերն անօրինել, մի կողմէն եկեղեցա-

կան խնդիրներն լուծել և միւս կողմէն օտարաց մղեկրծն ճարտարամտութեանց գիմադրել և իւր հօտն անվտանգ և խաղաղ պահպանել: Թերևս այս տառապակիր վիճակն է, որ զինքն կըտատամնցնէ և հրաժարականի խորեղիրներ յերեւան հանել կը տայ: Կաթողիկոս մի և կաթողիկոսութիւն, որ նիւթական կարողութիւն չունի, բարոյական աջակցութիւն չունի, վարչական քաջաւերութիւն չունի, ինչպէս կարող է լիովին թէ թեմական ներքին բարեկարգութեան վերայ խորհիլ եւ տնօրինել և թէ արապին թշնամեաց գիմադրել: Կիլիկիոյ վիճակին վերայ ՚ի մօտոյ ծանօթութիւն ունեցողներն կարող են մակարերել Կաթողիկոսի վիճակն: Եթէ դժուարութիւնն Վիսայն Սոյ միաբանից գիմադրութիւնն լինէր և ոմանց թեմականաց տժգոհութիւնն, այդ դժուարութիւնն դիւրին էր բառնալ եւ կամ վեհանձնաբար առ ոչ ինչ համարելով՝ գործն շարունակել. վասն զի այդպիսի դժուարութիւններ գրեթէ ամեն առաջ նորդական թեմերու մէջ անգամ կան: Բայց գլխաւոր դժուարութիւնն Կիլիկիոյ վիճակին համար՝ մարդոց պակասութիւնն է: Կիլիկիոյ վիճակն մարդոց կարօտութիւն ունի, Կաթողիկոսն մարդոց կարօտութիւն ունի, ահա միակ պատճառ նոյն վիճակի թշուառութեան:



ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ՊԷՐԱԹ

Օսմանեան պետութեան մէջ բնա-
կող աղբայինք ՚ի լոյս գիտէին ցարդ
որ իրենց պատրիարքական աթոռն՝
Ֆէթիհ Սուլթան Մէհմէտի հրա-
մանաւ՝ Կ. Պօլիս փոխադրուելէն ՚ի
վեր՝ արքունուստ առանձնաշնորհու-
թիւններ կը վայելէ , սրբ յասկաղէս
Պատրիարքական ՊԷՐԱԹԻՆ մէջ կ'ամ
փոխուին : Ահա այսօր , շնորհիւ Կեդ-
րոնական ընդհանուր Ժողովոյ որոշ-
ման , Ամեն . Ներսէս սրբազանի պե-
րաթը գրեթէ բոլոր աղբային թեր-
թերը կը հրատարակեն : Անշուշտ ա-
մէն պատրիարքական գահակալութե
առթիւ՝ պէրաթնէր շնորհուած , ալ
գային խորհրդարաններու չորս պա-
տին մէջ քանի մը քաղաքագէտ և մե-
նաշնորհ Հայեր անոնց պարունակու-
թեանց վերահասու եղած են և ապա
երկիրը անուր և վայելուչ վայրը պա-
հուած են , իբրեւ աղբային ինքնօրի-
նութեան իրաւանց անգին ու նուր
բարան գանձեր , սակայն երբէք այս
պիտի արքայական հրովարտակներ՝ Ընդ-
հանուր Ժողովոյ մէջ կարգացուելէն
ետեւ՝ հասարակութեան չէին հաղոր-
դուած : Արեմն այս գրեթէ եզական
և նշանակութեան արժանի ընթացք
մ' է , որ թերեւս այսուհետեւ սովոր-
ութիւն դառնայ , գովելի սովորու-
թիւն մը սրով տէրութեան պաշտօ-
նակալք Վեհ . Սուլթանին կամաց վե-
րահասու լինին և հնազանդին , հա-
մայն աղբն իր շափը , իրաւասութիւ-
նըն , յարգն իմանայ և պաշտպանէ , իր
պատրիարքական աթոռին հիմունքը
տեսնելու վիճակի մէջ գանուի և ըստ
այնմ դատէ , կռէ և շարժի :

Արիւ ինչ որ է այս հրատարակու-
թեան շարժառիթն , ամէն Հայ զայն

կարգալով բնապէս քանի մը խորհրդա-
ծու թիւններ ընելու կը պարտաւորի :
Ի հարկ է առանձինն հարցնելէն ետե
թէ արդեօք չորս հինգ զարէ ՚ի վեր
արքունուստ շնորհեալ պէրաթներն մի
և նոյն սճն ու տրամադրութիւններք
կը պարունակէն , թէ արդեօք՝ եթէ
կան այլայլութիւններ , ասոնք ազգին
նպաստաւոր են թէ աննպաստ . եւ
թէ մեր պատրիարքական Փահակալին
արդի պէրաթն նախորդներուն վրայ
առաւելութիւն մը կը պարունակէ՞ ար-
դեօք , Հայն կըստիպուի իր աչաց առ-
ջեւ գանուած պէրաթին վրայ կեդրո-
նել իր խորին ու շաղբութիւնն և անոր
հանգամանքն ըմբռնել , քանի որ ան-
կարող կը գտնուի իր հարցումներուն
գոհացուցիչ սրատասխաններ տալու ,
վասն զի նախկին Պատրիարքաց պե-
րաթները լոյս տեսած չեն , որ բաղդա-
տէ և եղբակացութիւն մը հանէ :

Իրաւի՞ պէրաթին ընդհանուր ու
գին և հանգամանքն Օսմանեան թա-
գին փառաց նշանաւոր փայլ մը կը յա-
ւելուն , և Հայ ազգութեան էութեան
մեծ երաշխաւորութիւն մը կընծայեն .
ըստ որում կրօնից և պաշտապանց ա-
զատութեան , կրօնական թշուառու-
թեան և աղբային ինքնօրինութեան
սկզբանց վրայ հիմնեալ են . իրաւունք-
ներ՝ որոց գործադրութիւնն ոչ միայն
մեր ազգն այլ բոլոր Օսմանեան պե-
տութեան տարբեր տարբեր աղբայ-
նութիւնները կը վայելեն ՚ի վաղուց
հետէ , մինչդեռ ուրիշ բարեկիրթ եւ
ազատասէր համբաւեալ տէրութիւն
ներ գեռ եւս այս թշուառութեան
սկզբունքն իսկ ընդունելու կը վարա-
նին եւ դաւանութեան խնդիրներու
մէջ մանեղով խիղճ և հոգի կը հարը-
տահարեն :

Այս սկզբանց համեմատ , պէրա-
թը կը ճանչէ պատրիարքական իշխա-

նու թիւն մը որ Բ. Դրան առջեւ ազգին միջնորդ և պատասխանատու, արածնութիւն ունի իր իրաւատութեան սահմանին մէջ ամէն ինչ անօրինե՛լ՝ ազգային օրինաց համեմատ, արտաքին որ և է միջամտութիւն մերժելով, և թագրիրներ ներկայայնել կրօնական խնդիրները՝⁽¹⁾ մասին, որոց պարտ ու պաշտօն յարգն ու գործադրութիւնն չը պիտի զտցուին: Աւրեմն Հայն ոչ միայն պէրաթին ուժով իր կրօնն անարգել դաւանելու իրաւունք ունի, իր եկեղեցւոյն օրինաց [և արարողութեց համեմատ՝ այլ և իր ազգային և կրօնական գործոց վարչութիւնն ըստանձնել, հասարակել ընդհանր օրինաց համաձայն: Այս ընտրական օրինաց մարմինն Սահմանադրութիւնը լինելով Վեհ. Սուլթանը վերստին կը հաստատէ զայն իր բարձր հրամանաւ, ինչ կ'ըսենք, զայն կ'անուանէ և կը պահանջէ որ ըստ այնմ անօրինութիւն ազգային գործերը: Այնուհետեւ պէրաթը կը յիշատակէ մի առ մի այն արածնութիւններն զոր կը վայելէն եկեղեցական հաստատութիւնք, կալուածք և վանօրէք և կրկին կրկին կը պատուիրէ տէրութեան պաշտօնակալաց որ այս իրաւունքը յարգեն, արդարութիւն հատուցանեն և երբէք Ս. Պատրիարքին պաշտօնին վերաբերեալ գործոց չը խառնուին և չը հակառակին:


Ահա այս է համառօտ իմաստն պատրիարքական պէրաթին զոր ամեն Հայ յարգելու պարտաւոր է: Թերևս գտնուին այնպիսիներ որ ազգային իշխանութիւնը տարբեր տեսութեամբ

նկատելով՝ տարբեր տեսութիւններ ընդունած են: Ի հարկէ անոնք որ սովոր են այս իշխանութիւնն միշտ սեղմեալ, մշտ տկար, միշտ աննշան երեւակայել ու հրատարակել, որպէս զի իրենց անձնական կարեւորութիւնն ու կայութիւնն 'ի վնաս ազգին բարձրացնեն՝ տհաճութեամբ պիտի դէտեն արածնութիւններ որ իրենց կարծիքն 'ի դերեւ հանելով, զարմանալի փառասիրական նպատակներու կը հակառակին: Աստի պիտի ջանան անոնց անգործադրութեան մէջ յոյս և միութարութիւն գանել, փոխանակ ազգային իշխանութեան սատար գտնուելով փառաւորութիւն: Անոնք որ ազգային իրաւատութեան մասին աւելի բարձր, աւելի մեծ գաղափարներ ունին, թերևս վհատին որ իրենց անկալութիւններն մասամբ 'ի դերեւ կ'եննեն և յուսաբեկ ազգային գործերէ կ'ընկրկին: Իսկ դաս մը մարդիկ՝ որ օրինաց գրոյն և գործադրութեան մէջ եղած տարբերութիւնը նկատելով անտարբեր կը մնան որ և է իրաւանց՝ մեծապէս կը սխալին, ըստ որում իրենց պաշտօնն ազգային շրջանին մէջ կրճատան: Սրէնք, արածնութիւն, իրաւունք որ կը տրուին մարդոց գործադրութեւ համար է, և երբ անգործ մնան՝ յանցանքն օրինաց չէ այլ պարագանց անհասանելուն՝ որ օրինաց մէջ ինքնաշարժ կարողութիւն մը կ'երեւակային: Ստէպըսըս և վերստին կը կրկիննք որ դեռ եւս մեր կացութեան, մեղե տրուած արածնութիւններէ օգուտքաղել չգիտնալէն զատ՝ ոչ միայն անոնց անգործադրութեան այլ կորստեան պատճառ կը դառնանք: Այլ ազգն 'ի վաղուց ստացած իրաւունքն արիութեամբ պաշտպանելու գիտութիւնն ու կարողութիւնն ունենար՝ այսօր մեծագոյն իրաւանց տիրացած պի

(1) Այսպէս կը հաստատուի Ազգ. Պատրիարքարանի՝ քաղաքային խնդիրներու մասին՝ անդեկողբելու համար ունեցած նախկին իրաւանց բարձումը, մինչդեռ յուսալի էր որ Ամեն. Ս. Պատրիարքն այս իրաւունքը վերահաստատելու միջոցները զանց չպիտի ընէր:

տի լինէր : Մեր ամենուն սրտաքննէ ուրեմն պոչտոպանել արքունուստ չընորհեալ արածնութիւններն և ազգային օրէնքն ամեն յեղակարծ պատահմանց գէմ, և սատար կանգնիլ ազգային օրինաւոր իշխանութեան որ միայն բոլոր Հայոց բարոյական աջակցութեամբը կարող է զօրանալ և յայտնապէս յօգուտ ազգին գործելու ստիպուին :

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ



ՄԱՆԱԿԱՆՔ ԵՒ ԴՈՒՍԲՕՐԻՔ

Ռուսիոյ լայնածաւալ տէրութեան մէջ թէ բազմութիւ ազգեր կան եւ թէ դաւանութեան կողմէն շատ բաժանումներ : Որչափ որ Ռուսիոյ տէրութեան գլխաւոր նպատակն է ամեն ազգեր , լեզուներ , դաւանութիւններ ՚ի մի ձուլել , ըստ կտակի Մեծին Պետրոսի . բայց կան տակաւին նոյն իսկ ազգաւ Ռուս եւ Ռուսախօս հերձուածներ , որոնք Ռուսիոյ եկեղեցւոյ դաւանութենէն արտաքոյ նոր դաւանութիւններ ունին , եւ սոյն բաժանումներն որչափ որ հալածանքներ կը բաժնեն և կը կրեն , դարձեալ կը յարատեւեն իրենց ընթացքին մէջ : Այս հերձուածներն շատ են , բայց մենք երկուքին վերայ միայն համառօտ տեղեկութիւն պիտի տանք , որոնք շատ հետաքրքրական են և շատերուն գրեթէ անձանօթ , ինչպէս որ անձանօթ են Ռուսաստանի անգնդախոր ծոյին մէջ դանուած բազմութիւ ազգայնութեանց ցեղական եւ բարոյականութեան կեանքն ու կենցաղն :

Այս երկու բաժանումներն են Մալականք , (կաթնակերք) և Գոխաբօրք , (հոգւով մարանչողք) : Սոքա Ռուսիոյ եկեղեցիէն բաժնուեցան այն ժամանակէրը 1654 թուականին , Ալէքսի Միխայէլովիչի հրամանաւ , Նիկոն Պատրիարքն Սինօդ կազմեց և սկսաւ Ասուռածաշունչն և Եկեղեցւոյ արարողութեան գրքերն քննութեան առնուլ և սրբագրել :

Սոյն հերձուածներն , որ զիրենք Սպարոփէրցի կ'անուանեն , այսինքն հաւանդ հաւատոյ հետեւողք , սաստիկ կերպիւ ընդդիմացան և ամենեւին չը կամեցան ընդունիլ Պատրիարքի սրբբագրութիւնն , այնպէս , որ արարողական գրքերու մէջ փոփոխութիւններ մտած են , և այս տեղէն յառաջ եկաւ բաժանումն կամ հերձուածն : Մեծն Պետրոս ջանաց Ռուսիոյ տիրող եկեղեցւոյն հպատակեցնել , բայց հաւածանաց սաստիկ միջոյններն անօգուտ եղան և հերձուածն զօրացաւ :

Նիկողայոս Կայսրն ևս Մեծին Պետրոսի փորձն փորձեց և հօր ընդդիմադրութիւն տեսնելով՝ հերձուածողաց մեծ մասն աքսորեց Անգրկովկասեան երկիրներն , որպէս զի տառապանքէ և չքաւորութենէ ստիպեալ՝ հոյսաակին իշխող եկեղեցւոյն : Սակայն նոքս ամեն տառապանք , քաղց , մերկութիւն , մուրացկանութիւն և թափառականութիւն յանձն առին և ամենեւին չը շեղեցան իրենց ընթացքէն : Սոյն աքսորականներն այն ժամանակէն ՚ի վեր բնակութիւններ հաստատած են Անգրկովկասեան երկիրներու մէջ և կը յարատեւեն իրենց դաւանանքին վերայ :

Մալականներն գրեթէ Ռուսիոյ Քուարքներն են . Ռուսիոյ եկեղեցւոյն ծէսերն եւ արարողութիւններն չ'են ընդունիր , խանդարեալ կարծելով .

բայց դաւանութեան կողմէն շատ չ'են տարբերիր : Մարտեր կեանք ու վարք ունին , և շատ աշխատասէր են , որով և այժմ անկարօտ կ'ապրին : Աւետարանն բառական կերպիւ կ'ընդունին , ամենեւին մեկնութիւն չ'են տար . եթէն խորհուրդներն բոլորովին հոգեւոր իմաստով կ'ըմբռնեն , առանց երբէք նիւթական և տեսանելի արարողութեան : Իւրաքանչիւր որ քահանայ կը համարուի և քահանայութիւն ուրիշ բան չ'է , եթէ ոչ , Ս . Գիրք կարգալ ժողովրդեան առջեւ : Իւրաքանչիւր ընտրուած քահանայ այն պաշտօնն կը վարէ մի կամ երկու տարի , և ապա այլք իրեն կը յաջորդեն :

Գուխաբօրներու հաւատոյ վարդապետութեանց մէջ շատ նմանութիւններ կան նախնի հերձուածոց , Երրորդութիւնն կ'ընդունին , բայց ըզհայր կը համարին ըստ , զՈրդին՝ կեանք , իսկ զՀօգին Սուրբ՝ խաղաղութիւն : Հայրըն կը յայտնուի մարդոյն յիշողութեան միջոցաւ , Որդին՝ իմացականութեան , իսկ Հոգին Սուրբ՝ կամաց : Կը հաւատան հոգւոց յառաջագոյն գոյութեանն և մարդոց անկմանն և այնպէս կ'ընդունին , որ հոգին դրուած է մարմնոց մէջ իւր մեղքն քաւելու համար : Հետեւապէս , երբ Ագամ երեւեցաւ երկրի վերայ , շիտթ յիշողութիւն ունէր վերին աշխարհի . միտքն խաւարած էր և կամքն՝ ապրտամբ : Նա չը կարողացաւ փորձութեան դիմադրել և նորէն մեղանշեց , նորա մեղքն իւր սերունդին չ'անցնիր : Հոգին հակամիտ է չարութեւ և սորա պատճառն է մարդոց առաջին անկումն : Աշխարհաբաւութեանն մարբութեան տեղի է , ուր մարդն ազատութիւն բարի գործելով պէտք է թողութիւն ստանայ իւր այն հին մեղաց , որով իւր անձն աւելի սիրեց քան զԱստուած :

Յիսուս Քրիստոս , որ Որդի Աստուծոց է և Աստուած , մարմնացաւ , որ մարդուն առաջնորդէ և օգնէ այն փորձութեան և քաւութեան մէջ : Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւններն պարունակուած են Ս . Գրոց մէջ , բայց այնպէս խորհրհաւոր են , որ միայն Գուխաբօրներուն արուած է հասկանալ , իսկ նորածեւ Ռուսներն զուրկ են այս շնորհքէն : Այս է ահա Գուխաբօրներու դաւանութիւնն :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Հունգարիոց Պ' շո քաղաքէն Հայազգի տիկին մի ուխտաւորութեան եկաւ 'ի Ս . Լըրուստոյէմ՝ իւր 18 աւմեայ զաւակին հետեւ միասին : Ըյս առաջին անգամն է որ Հունգարացի ազգայիններէն ուխտաւոր կ'ունենայ Ս . Լ'թոռս : Յիշեալ Հայազգի Տիկինն մաքուր Հայերէն կը խօսի եւ սրտաշարժ տեղեկութիւններ կը պատմէ մեր Հունգարացի ազգայնոց վերայ , այնպիսի տեղեկութիւններ , որոնք միտթարական են և տրամական : Սիտիթարական , որովհետեւ Հայութիւնն տակաւին կը պահպանուի յիշեալ երկրին մէջ , տրամական՝ որովհետեւ բնաւ տեղեկութիւն չունին մեր Կաթողիկոսական և Պատրիարքական Լ'թոռոց վերայ , մեր Ռուսաստանի , Տաճկաստանի , Պարսկաստանի և Հնդկաստանի ազգայնոց վերայ , մեր աղբային Վարչութեան վերայ ,

Ձեր ազգային դայութեան և բազմութեան վերայ և այլն և այլն :


Նախնի դարուց արհաւիրացի գէպքերու պատճառաւ ազգային յարաբերութիւններն խաղաղ դադարելով այսպէս երկու կողմէն եւս անձանօթ մնացած են ինչպէս Հոսեօսիայ Հայք մեզ, նոյնպէս և մեք Հունգարիայ Հայոց :

Ներկայ դարս յարաբերութեան և հաղորդակցութեան դար է, երկրի մի ծայրի բնակիչք միւս ծայրի հետ դիւրութեամբ կը հաղորդակցին : Եւրոպայի է, որ մեք եւս թմրութենէ շարժինք և գէթ Ձեր արեւակիցներու հետ հաղորդութիւն ունենամք, իրարու ջաւ և ուրախութիւն հասկանք, զիրար որոններ և մեր ազգայնութեան ցրուած տարերքն սիրով շաղախներ և միացնելով ազգային ամբողջութիւն կազմենք :

— Ներկայ ամսոյ մէջքանի մի օր շարունակ ձիւն եկաւ և Պաղեստինն հիւսիսային ձմրան սոււանով ծածկեցաւ : Եւս երկրորդ տարին է, որ սու վորահանէն արտաքոյ Պաղեստին եւս ձիւնապատ երկիրներու գոյն կը դգեանու, միայն այս տարբերութեամբ, որ սակաւ աւուրց մէջ իսկոյն կը մերկանայ իւր թանձր ղգեստն : Օտրուներ կը պատմեն թէ՛ հազիւ ուրէք տեսած են ՚ի Պաղեստին այնպիսի ձիւն, ինչպէս կը տեսնեն վերջին երկու տարիներուս մէջ :

— Վարտիք մի աւուր մէջ երկու ննջեցեալներ ունենալով, թերեւս այլոց դրդմամբ, կամեցան թաղման ժամանակ դեր մի խաղալ մեր գերեզմանատան մէջ, և այն տեղ թաղել, ուր ինքեանք կամին : Յուղարկաւորութիւնն սովորականէ դուրս մեծ բազմութեամբ էր և անշուշտ նպատակ ունէին խառնութիւն յարուցա-

նել և բռնի իրենց տպօրինի կամքն յառաջ վարել : Մեր ուխտաւորաց ազգային անձնատիրութիւնն գրգռուելով գերեզմանատուն դիմեցին, սակայն սատարի պատուիրուեցաւ իրենց, որ ամենեւին խռովութեան առիթ չտան : Երեւելին լուր տրուեցաւ, և իսկոյն զօրքեր եկին : Վարտիք տեսնելով, որ իրենց պատրաստած ամեն գաղտնի հնարքներն ՚ի դերեւ ելան, ստիպուեցան Ս. Աթոռոյս կողմէն իրենց ցոյց տրուած տեղն թաղել նրնջեցեալներն, և այսպէս խողարդութեամբ անուշաւ խառնութեան :



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ




Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց

ՍՈՒՐԲ ԵԿԵՂ ԵՑԻՈՑ

Ս. Աթոռոյս Տպարանէն ՚ի լյօս ընծայեցաւ փոքրազիր ժամագիրք, մաքուր թղթի վերայ եւ վայելուչ տպագրութեամբ : Պարունակութիւնն ամբողջ է, իսկ գիրքն փոքր, այն նըպատակաւ, որ դիւրին լինի ունենալ նաև ՚ի ճանապարհորդութեան, իրրւ ընտիր աղթագիրք, որ անհրաժեշտ կարելոր է ամեն Հայու համար :

Գինն է երեք կինգնոց, հասարակ կազմով, և կը ծախուի թէ՛ ՚ի Ս. Աթոռու և թէ՛ Պօլսոյ Փոխանորդարանին մէջ :



Հեղերէն խաչորագիր. Տպեալ 1869.
 Հինգրիկոս եւ Մարտի. Տպեալ 1870.
 Հրահանգ սիրոյ, գործ Մայրեղեան Յովսէփ վարժապետի. Տպ. 1870.
 Ղերուքնա եղեռացի, եւ Եսայի կաթողիկոս Աղուանից. Տպեալ 1868.
 Նաչոյ գիրք. Տպեալ 1873.
 Ճառ հաղորդութեան. Տպեալ 1860.
 Ճառ դպրոցական. երկու ժողով տեսարաններ. Տպեալ 1863 եւ միւսը՝ 1867.
 Ճարտասանութիւն առ ձեռն. աշխատասիրեաց Եղիաշար Մուրասեան.
 Մասնադրութիւն նախնեաց. Տպեալ 1856.
 Մատթէոս Ուսուցիչի, գործ նախնեաց ժի դարու. Տպեալ 1869.
 Մեկնութիւն Երեւանցոց. Տպեալ 1850.
 Մեկնութիւն յայտնութեան. Ներսիս Լաւրեանցոյ. Տպեալ 1855.
 Միխայիլի Ասորոյ ժամանակագրութիւն, գործ ժի դար. Տպեալ 1871.
 —Նոյնը՝ ուլի գրչագրով բարդատուած ժողովին ստորերութեամբ.
 Յովհաննէս կաթողիկոս, պատմութիւն Հայոց, գործ նախնեաց թ. դարու.
 Յովսէփի գեղեցիկ. Տպեալ 1849.
 Նորեկ. աղթամասոյց Ս. Հօրն մերոյ գրիգորի Նարեկացոյ. Տպ. 1868.
 Նոր բնութեցարան. Տպեալ 1868.
 Ողբերգութիւն 'ի մեծն Ներսէս. Տպեալ 1863.
 Ուխտ հայրենասիրի. Բ. Տպ. 1874.
 Ուսումն բարուց. Տպեալ 1857.
 Ուսումն տրամաբանութեան, Տպեալ 1869.
 Պատմութիւն Ս. Գրոց. Տպեալ 1867.
 Պատմութիւն նոր կրակարանի, Տպեալ 1872.
 Պատմութիւն Ս. Երուսաղէմի, քաղաքային թաղամասնութեամբ. Տպ. 1872.
 Պատմութիւն Երուսաղէմի. աշխատասիրեաց Խորեն վարդապետ. (**)
 Պատմութիւն Ս. Լուսաորչի. Տպեալ 1867.
 Պատմութիւն Լէնկիմեւրայ. Տպեալ 1873.
 Պատմութիւն Հայոց. Տպեալ 1870.
 Պատմութիւն բարոյական. Տպեալ 1872.
 Պատմութիւն Հայաստանեայց, առաքելական Ս. Եկեղեցոյ. Տպեալ 1872.
 Պատմութիւն երկամեայ պահպանութիւն 'ի Հասկէաստան, Տպեալ 1871.
 —Նոյնը՝ Գաղղիարէն լեզուաւ.
 Սաղմոս խաչորագիր, այլ եւ այլ անգամ տպուած.
 —Նոյնը՝ մեծ գիրքով
 —Նոյնը միջակ՝ դպրոցներու համար. Տպեալ 1873.
 Նոյնը՝ ժողով գիրքով եւ մանր գրով.
 Սիւն օրագիր, կազմեալ 1866 էն մինչեւ 1873. աշխարհիկ լեզուաւ.
 Ստորագրութիւն Երուսաղէմի, Տպեալ 1859. (**)
 Սլաւութիւն փոխառաց մանկանց. Տպեալ 1868.
 Տանկիլ տեղագրութիւն Երուսաղէմի. Տպեալ 1855. (*)
 Տարբեր ինքնատասիրութեան, Տպեալ 1852. (*)
 Տեսչութիւն հովուական. Տպեալ 1855. (*)
 Տրամաբանութիւն, Պատուելի Գրիգորի փեշտիմաճեան. Տպեալ 1855. (*)
 Տօնացոյց. Տպեալ 1868.
 Բերական, հին սեպ, Տպեալ 1872.
 Բերական Գաղղիարէն լեզուի. Տպեալ 1871.
 Բերականութիւն Հայերէն լեզուի. Տպեալ 1870.
 Բերականութիւն Գաղղիարէն լեզուի. Տպեալ 1869.
 Բրիտանական համալսարան, Հայերէն եւ Արարեղէն լեզուաւ. Տպ. 1870.
 Օրացոյց եւ գուշակութիւնք օրոց.

Գրք	Փոյ
	30
2	20
2	
3	
300	
4	
	30
3	
6	
14	
25	
10	
16	
12	
10	
10	
12	
5	
4	
4	
18	
3	
8	
7	
5	
8	
4	
10	
6	
7	
16	
20	
20	
10	
6	
6	
3	
40	
4	
6	
3	
6	
8	
18	
10	
	20
2	20
4	
3	
2	
1	

Յ Ա Ն Կ

Մ Ա Ր Տ

Կրթութիւնն ժողովրդեան	49_54
Մարգկային սեռի կատարելագործութիւնն . — Բնութեան բարոյական օրէնքք	54_58
Երգող թաշուհներ	58_59
Արինք հովուական	—59
Արձան յաւերժական սիրոյ 'ի սգալի մահ	60_61
Տեղեկութիւնք Բեթլէհէմի աղգայնոց վերայ	62_64
Կլարին	—64
Ստիակ Հայաստանի	65_66
Տ. Տ. Մկրտիչ սրբադնակատար Կաթողիկոս Կիլիկիոյ	66_67
Պատրիարքական Պէրաթ	68_70
Մալականք և Գուխարօք	70_71
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ	71_72
Նոր հրատարակութիւն	—72

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Մինչ ամեն ամիս կը հրատարակուի 24 էրեսէ բաղկացեալ մեկուկէս
սեթածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիյէ, հանգերձ Խանապարհի
ծախարօլը կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տետրակ առնել սուղօղջ, պէտք է ամեն մեկ տետրին շորս դա-
հեկան վճարել :